ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ ՑՈԼԱԿԻ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՄԻՆԱՍՅԱՆ Է.Գ.

պատմական գիտությունների դոկտոր
ՄԱՐՈՒԹՅԱՆ Հ.Տ.

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՎԱՂԱՐՇՅԱՆ Ա.Գ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. փետրվարի 13-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմություն 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայ ժողովուրդը տասնամյակներ շարունակ պայքարում է իր նկատմամբ իրագործված ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար, ինչի արդյունքում տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր: Սակայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի պայմաններում, Թուրքիան պետական մակարդակով շարունակում է ժխտել հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը, ինչը նշանակում է, որ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման համար պայքարելով անհնար է հասնել հարցի վերջնական հանգուցալուծմանը և վաղուց հասունացել է ժամանակը պայքարելու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ու հատուցման համար:

2015 թ. հունվարի 29-ին պաշտոնապես հրապարակվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Այդ փաստաթղթով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը, արտահայտելով համայն հայության միասնական կամքը, հայտարարեցին, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար, ինչը ենթադրում է իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ պայմանական խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ: Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի կրած կորուստները հաճախ նույնականացվում են այդ հանցագործության հետևանքների հետ, մինչդեռ, ի տարբերություն կորուստների, դրանց հետևանքները անցյալում չեն մնացել: Հայ ժողովուրդն արդեն մեկ դար Հայաստանում և Սփյուռքում շարունակում է իր ուսերի վրա կրել Հայոց ցեղասպանությամբ իրեն հասցված կորուստների հետևանքների ծանր բեռը: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը և չեն հաղթահարվել այդ հանցագործության հետևանքները, գործ ունենք շարունակվող ցեղասպանության հետ:

Հայրենազրկում. հայ ժողովրդին իր բնօրրանից զրկելը Հայոց ցեղասպանության գլխավոր կորուստն է, որը ցեղասպանության կազմակերպիչների համար հանդիսացել է այդ հանցագործությունն իրագործելու գլխավոր շարժառիթը և նպատակը[1]: Մի կողմից՝ հայրենիքի կորստի հետևանք պետք է համարել Սփյուռքի գոյավորումը, երբ ցեղասպանությունից հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց հայրենի օջախները, ստիպված եղան հայրենիքից

[1] Տե՛ս Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013, էջ 427:

դուրս համակերպման դժվարին ճանապարհ անցնել: Մյուս կողմից՝ հայրենիքի մեծ մասի կորուստը և արևմտահայության ողջ մնացած հատվածի դուրս մղումն Արևմտյան Հայաստանից երկփեղկել է հայ ժողովրդին, խաթարել է նրա միասնականությունը, ջլատել ուժերը ու կասեցրել բնականոն զարգացման հեռանկարները: Ցեղասպանության հետևանքով աշխարհագրորեն միմյանցից հեռացվել են հայ ժողովրդի երկու հատվածները, ինչը որոշակի խզում է առաջացրել նրանց միջև: Տարբեր վարչակարգերի իշխանության տակ ապրելով, ժամանակի ընթացքում նրանք ձեռք բերեցին մտածողության որոշ տարբերություններ, ինչն էականորեն բարդացնում է համահայկական հարցերի լուծման գործընթացը:

Հայոց ցեղասպանության ընթացքում **մարդկային կորուստները** կազմեցին ավելի քան 1,5 միլիոն մարդ: Սակայն, մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս, անպայման պետք է հաշվի առնվի նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում բռնի իսլամացված հայերի թիվը, որոնք ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուծացման այդ գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց հայ համարել: Մարդկային կորուստների թվի հստակեցումից հետո անհրաժեշտ է պարզել, թե այդ կորուստներն ի՞նչ հետևանքներ են ունեցել և ինչպե՞ս են անդրադարձել հայ ժողովրդի հետագա վերարտադրման վրա և որքան կկազմեր հայերի թիվն այսօր՝ հանցագործությունից մեկ դար անց, եթե հանցագործության զոհերը ողջ լինեին: Այս առումով պետք է հաշվի առնել այն, որ արևմտահայերի ընտանիքները, որպես կանոն, բազմազավակ էին: Բացի այդ, 25 տարին մեկ կատարվում է բնակչության վերարտադրություն (ռեգեներացիա), այսինքն՝ անցած մեկ դարի ընթացքում առնվազն չորս անգամ պետք է կատարվեր սպանված հայերի վերարտադրությունը, եթե նրանք ողջ մնային:

Մշակութային ժառանգության կորուստ. Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցվել են վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. օսմանյան պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ կայսրության տարածքում արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ[2]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464 լիովին ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի[3]: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Այս առումով պետք է նշել, որ «շարունակվող ցեղասպանության» մասին խոսելիս, նկատի ունենք նաև Թուրքիայի կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող՝ ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ մասին:

Մշակութային ժառանգության կորուստը չպետք է սահմանափակել միայն պատմաճարտարապետական կառույցների ոչնչացումով: «Գենոցիդ» եզրի և

---

[2] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915–1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ», Եր., 2010, թիվ 3 (31), հավելված, էջ XVI–XVII:

[3] Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19–20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 144:

ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հեղինակներից մեկը՝ Ռաֆայել Լեմկինը, դեռևս 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման հինգերորդ կոնֆերանսում ունեցած իր հատուկ զեկույցում առաջին անգամ բավականին հստակորեն տվել է ազգային-մշակութային ցեղասպանության սահմանումը: Մանրամասն ներկայացնելով Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ոչնչացումը, Լեմկինը դա անվանում էր «անանուն հանցագործություն» և դրա դրսևորումներից էր համարում նաև «վանդալիզմի այն գործողությունները, որոնք ուղղված են ազգային, կրոնական, ռասայական կամ էթնիկ խմբի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ **մայրենի լեզուն արգելելու, տպագիր գրքերի, դպրոցների, պատմական հուշարձանների, պաշտամունքային օջախները ոչնչացնելու կամ դրանցից օգտվելու արգելքի միջոցով** (ընդգծումը մերն է – Ա. Մ.)»[4]: Ուրեմն՝ հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում է նաև հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը, որոնցում ամփոփված էր հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքը: Այդպիսով՝ ցեղասպանության կազմակերպիչները մեզ մասնակիորեն կտրել են մեր նախնիների մտքից ու ոգուց, այն անգին գիտելիքներից, որոնք նրանք մեզ փորձում էին փոխանցել այդ ձեռագրերի միջոցով[5]: Մշակութային ցեղասպանության այս հետևանքները չեն կարող վերականգնվել որևէ նյութական փոխհատուցմամբ:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովուրդն իր հայրենիքում ենթարկվեց ոչ միայն բնաջնջման, այլև զանգվածային ունեզրկման, նրա ունեցվածքը բռնազավթվեց թուրքական իշխանությունների և մահմեդական բնակչության կողմից: Ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդին հասցված **նյութական կորուստների** հետ կապված հիմնականում հիշատակվում է 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի պատվիրակությունների կողմից ներկայացրած համատեղ հուշագիրը, որի համաձայն 1915–1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում էին 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000 բաժին է ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000՝ Հայաստանի Հանրապետությանը[6]: Բնական է, որ 1919 թ. հետո ֆրանսիական ֆրանկը արժեզրկվել է և այժմ այն լրիվ այլ արժեք ունի: Տասնամյակներ անց հայերի նյութական կորուստներով զբաղվող Գ. Բաղջյանը կատարեց այդ գումարի վերահաշվարկ՝ 1919 թ. մեկ ֆրանկի դիմաց 1987 թ. դրությամբ 33,5 ֆրանկ հարաբերակցությամբ, արդյունքում ստացվում է 640 մլրդ, 890 մլն. ֆրանկ[7]: Դրանից հետո անցել է ևս երեք տասնամյակ, և այդ ընթացքում ֆրանկի սղաճի ու բանկային տոկոսների ավելացման հաշվարկով այդ թիվը պետք է որ արդեն հատած լինի մեկ տրիլիոն եվրոյի սահմանագիծը:

Հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ. Հայոց ցեղասպանության հետևանքով հասցված հոգեբանական սթրեսները նույնպես անհետևանք չեն մնացել և անդրադարձել են հայ ժողովրդի հետագա կենսագոր-

---

[4] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 7.

[5] Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство”, (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, с. 15.

[6] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող Լ. Բարսեղյան, Եր., 1999, էջ 13:

[7] Baghdjian K. K., La confiscation par le gouvernement turc des biens Arméniens… dits abandonnés, Montréal, 1987, p. 204-205.

ծունեության վրա: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդույթներ ու վախեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնն անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ցեղասպանությունից անմիջականորեն վերապրածների ու նրանց սերունդների, այլև ողջ հայ ժողովրդի մասին է: Չի վերացել այն վախը, որ կատարվածը մի օր կարող է կրկնվել, քանի դեռ մեղավոր կողմը ոչ միայն չի ընդունել իր մեղքը և չի ապաշխարհել, այլև շարունակում է ժխտել կատարված հանցագործության փաստը: Իր հայրենիքի մեծագույն մասը կորցնելով՝ հայ ժողովուրդը զրկվել է սեփական կենսատարածքի և նախնիների կերտած ազգային արժեքների հետ շփվելու հնարավորությունից: Դրա հետևանքով առաջացած թերարժեքության բարդույթներից մեկն էլ պետք է համարել այն, որ ոմանց մոտ առաջացել է թերահավատություն ու անվստահություն ազգի ապագայի, սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և օտար արժեքներին ապավինելու հակում[8]: Հայ ժողովրդի մոտ զարգացման ու առաջադիմության ձգտումների փոխարեն Սփյուռքում ու Հայաստանում տասնամյակներ շարունակ տիրապետել է գոյատևման հոգեբանությունը: Բարեբախտաբար, հայ ժողովուրդն աստիճանաբար հաղթահարում է ցեղասպանված ժողովրդի բարդույթները և սկսում է վերածվել պահանջատեր ժողովրդի:

Հոգեբանական լուրջ հարված հասցվեց նաև ցեղասպանության ընթացքում բռնի իսլամացված հայերին, որոնք մահվան սպառնալիքի տակ ստիպված հրաժարվել են իրենց ազգային պատկանելությունից, ընդունել օտարի կրոնը և հատկանիշները: Տասնամյակներ շարունակ նրանք Թուրքիայում ապրել ու ապրում են վախի մթնոլորտում՝ ստիպված թաքցնելով իրենց իրական ինքնությունը[9]: Ներկայումս այսպես կոչված՝ «թաքուն հայերի» շրջանում դրական միտում է նկատվում, քանզի նրանցից ոմանք արդեն խոսում են իրենց հայկական արմատների մասին և նույնիսկ փորձում վերադառնալ առաքելական հավատքին, սակայն դա կատարվում է լուրջ հոգեբանական բարդույթների, առաջին հերթին՝ վախի հաղթահարման միջոցով:

Թուրքիայի Հանրապետության կողմից ներկայումս պետականորեն իրականացվող՝ Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որը կասկածի տակ է դնում կատարված հանցագործությունը, վիրավորում ոչ միայն նրանց ժառանգների, այլև ողջ հայ ժողովրդի արժանապատվությունը: Ժխտելով Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիան լրացուցիչ հոգեբանական հարված է հասցնում այդ հանցագործության զոհ դարձած հայ ժողովրդին, ուստի տվյալ հարցում թուրքական ներկայիս իշխանությունների պաշտոնական դիրքորոշումը ոչ այլ ինչ է, քան նախորդ վարչակարգերի կողմից հայերի դեմ իրականացված հանցավոր քաղաքականության շարունակությունը՝ արդեն տեղեկատվական դաշտում:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է վեր հանել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմական և իրավաքաղաքական հիմքերը: Այդ նպատակից ելնելով ատենախոսության համապատասխան գլուխներում ու ենթագլուխներում առաջադրվում են որոշակի խնդիրներ: Հետազոտության մեջ համակողմանի

[8] Стратегические последствия геноцида армян, с. 16.
[9] Տե՛ս Այլախոս և այլադավան հայեր, Եր., 2007:

քննության են ենթարկվում թեմայի վերաբերյալ աղբյուրները՝ միջազգային պայմանագրերը, դիվանագիտական փաստաթղթերը, ինչպես նաև պատմագիտական ուսումնասիրությունները, որոնցում ներկայացված պատմական փաստերը համադրվում են միջազգային իրավական նորմերի ու ժամանակակից աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների հետ, ինչի արդյունքում կատարվում են համապատասխան եզրահանգումներ:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ

1. Պատմագիտական, իրավագիտական ու քաղաքագիտական ուսումնասիրությունների, միջազգային իրավական նորմերի, միջազգային պայմանագրերի և դիվանագիտական փաստաթղթերի հիման վրա ատենախոսության մեջ առաջին անգամ կատարվել է միջգիտակարգային համալիր հետազոտություն, որի արդյունքում վեր են հանվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմական, իրավական ու քաղաքական հիմքերը:

2. Պատմական փաստերը համադրվել են միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հետ, և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցը քննարկվել է գործնական-կիրառական հարթության վրա, բացահայտվել են այն հնարավորությունները, որոնք միջազգային իրավունքը ընձեռում է այդ հարցում:

3. Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացված «մարդասիրական միջամտությունների» և միջազգային փաստաթղթերի հիման վրա ապացուցվում է, որ «գենոցիդ»՝ ցեղասպանություն եզրույթի շրջանառումից անկախ կանխամտածված ձևով իրագործված հայերի զանգվածային սպանությունները հենց կատարման պահին՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին գործող միջազգային սովորութային իրավունքի նորմերի համաձայն պատասխանատվություն նախատեսող հանցագործություն են համարվել:

4. Պատմական փաստերով ու իրավական նորմերով հիմնավորվում է, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետությունը հայերի ցեղասպանությունն իրագործած Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակողն է, ուստի վերջինիս չգոյության պայմաններում այդ հանցագործության պատասխանատվությունը փոխանցվում է ժամանակակից Թուրքիայի վրա: Հայաստանի երրորդ հանրապետությունն էլ, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդ և հայության օրինական շահերի արտահայտիչ, իրավասու է միջազգային-իրավական պահանջներ ներկայացնել Թուրքիային, կամ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով որպես հայցվոր կողմ հանդես գալ միջազգային դատական ատյաններում:

5. Ատենախոսության մեջ քննարկվում է Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կիրառելիության հարցը: Հիմնավորվում է այն թեզը, որ ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիան Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի է, քանզի դեռևս չեն հաղթահարվել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության հետևանքները և քանի որ Թուրքիան պաշտոնապես շարունակում է ժխտողական քաղաքականությունը, այսինքն՝ հանցագործությունը շարունակվում է այլ հարթություններում, իսկ տվյալ պարագայում նշված փաստաթղթի հետադարձ կիրառության խնդիր չի առաջանում:

6. Աշխատանքում հիմնավորվում է, որ Օսմանյան կայսրությունը և նրա ինքնության շարունակողը՝ Թուրքիայի Հանրապետությունը, միջազգային երկկողմ ու բազմակողմ պայմանագրերով Հայկական հարցի հետ կապված պարտավորությունները հետևողականորեն խախտել են՝ ինչն, ի վերջո, հանգեցրել է հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության իրագործման: Հայկական հարցում Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության ստանձնած միջազգային պայմանագրային պարտավորությունների խախտումները պետք է քննարկվեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համատեքստում: Քանի որ պայմանագրային պարտավորությունների խախտումները միջազգային իրավունքի տեսակետից իրավախախտ պետության համար կարող են պատասխանատվություն առաջացնել, ուստի թուրքական կողմից պետք է պահանջել հարգել միջազգային պայմանագրերով սահմանված հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետության իրավունքները և վերացնել այդ փաստաթղթերով թուրքական կողմի ստանձնած միջազգային պարտավորությունների խախտումները:

7. Հետազոտության մեջ թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրքերի 1919 թ. դատավարությունը համեմատվում է Նյուրնբերգյան տրիբունալում նացիստների դատավարության, իսկ Թալեաթի սպանության գործը՝ նացիստ հանցագործ Ադոլֆ Էյխմանի դատական գործի հետ, ինչի հիման վրա եզրակացվում է, որ Հայոց ցեղասպանությունը և հրեաների Ողջակիզումը նույնական հանցագործություններ են, ուստի վերջինիս դատապարտման ու հետևանքների հաղթահարման գործընթացը լիովին կարող է նախադեպ ծառայել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության հետևանքների հաղթահարման համար:

8. Աշխատանքում բովանդակային քննության և համեմատական վերլուծության են ենթարկվում միջազգային միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր երկրների օրենսդիր մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի տեքստերը, վեր են հանվում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության հետևանքների հաղթահարման գործընթացի վրա այդ փաստաթղթերի կիրառական ազդեցության հեռանկարներն ու հնարավորությունները:

9. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցը քննարկվում է համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում խորացող հակասությունների լույսի ներքո, վեր են հանվում ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման գործընթացի վրա դրանց հնարավոր ազդեցությունները: Ատենախոսության մեջ քննության է առնվում նաև այն հարցը, թե Թուրքիայի քաղաքական համակարգի խնդիրներն ու մարտահրավերները ինչպես են ազդում և հետագայում ինչպես կարող են անդրադառնալ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի վրա:

Ատենախոսության գործնական և կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքի հավելվածում ներկայացվում են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման նպատակով իրավական և քաղաքական ուղղություններով կատարվելիք աշխատանքների առաջարկներ, որոնք կարող են օգտագործվել ՀՀ ԱԳՆ-ի և Սփյուռքի լոբբիստական կառույցների կողմից: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել Հայոց ցեղա-

սպանության պատմության տարաբնույթ խնդիրներին նվիրված բուհական հատուկ դասընթացներում:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է XX դարը և XXI դարասկիզբը: Դա պայմանավորված է հենց հայերի զանգվածային բնաջնջման իրագործման ժամանակ Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրով սկիզբ առած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացով, որը 2015 թ. համահայկական հռչակագրով վերածվեց հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար մղվող պայքարի: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման և այդ հանցագործության հետևանքների հաղթահարման գործընթացներն իրենց բնույթով սերտորեն փոխկապակցված են, կազմում են մեկ ամբողջություն, ուստի անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել որպես շաղկապված պատմական զարգացումների միասնական ընդհանրություն:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական-համադրական, պատմահամեմատական և միջգիտակարգային համադրման մեթոդները: Վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ իրականացվել է փաստերի վերհանում, հավաքագրում, համակարգում, ընդհանրացում և դրա հիման վրա հստակեցվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմքերը: Պատմահամեմատական մեթոդի օգնությամբ համեմատական վերլուծության են ենթարկվել Հայոց ցեղասպանության և հրեաների Ողջակիզման միջազգային ճանաչման, դատապարտման ու դրանց հետևանքների հաղթահարման գործընթացները՝ հանգելով այն եզրակացության, որ Գերմանիայի կողմից հրեաների Ողջակիզման հետևանքների վերացման գործընթացը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար կարող է ծառայել որպես նախադեպ: Քանի որ ուսումնասիրության նպատակները նախատեսում են պատմական, իրավական ու քաղաքական տվյալների ու գիտելիքների համադրում, ուստի կիրառվել է նաև միջգիտակարգային (պատմություն-միջազգային իրավունք, պատմություն-քաղաքագիտություն) համադրման մեթոդը:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները հրատարակվել են հոդվածների ու մենագրությունների տեսքով, թեմայի վերաբերյալ զեկուցումներ են ներկայացվել հանրապետական ու միջազգային մի շարք գիտաժողովներում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Նախկինում հիմնահարցը համակողմանի, համալիր գիտական ուսումնասիրության չի ենթարկվել: Հիմնահարցի վերաբերյալ հրատարակվել են փաստաթղթերի ժողովածուներ կամ առանձին խնդիրներին նվիրված աշխատություններ:

Սկզբնաղբյուրներ: Հայկական հարցին և Հայաստանին վերաբերող Բաթումի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի և Սևրի պայմանագրերի ուսումնասիրման համար օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի ՀՀ Կառավարության (ֆ. 113), ՀԽՍՀ արտաքին գործերի կոմիսարիատի (ֆ. 114), Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարության

(ֆ. 200) և Հայկական հարցի վերաբերյալ փաստաթղթերի հավաքածուի (ֆ. 450) ֆոնդերի նյութերը:

Դիվանագիտական փաստաթղթերում Հայկական հարցի արծարծումների և միջազգային փաստաթղթերում հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման դրույթների ուսումնասիրման տեսակետից կարևոր սկզբնաղբյուրներ են նաև Ա. Հովհաննիսյանի[10], Ջ. Կիրակոսյանի[11], Մ. Ներսիսյանի[12]. Վ Միքայելյանի[13], Ե. Ադամովի[14] խմբագրությամբ լույս տեսած, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի Արտգործժողկոմի հրատարակած[15] ժողովածուները: Փաստաթղթերի այդ ժողովածուներում հավաքված միջազգային պայմանագրերի տեքստերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է դառնում վեր հանել Օսմանյան կայսրության կողմից Հայկական հարցում և Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի նկատմամբ ստանձնած միջազգային պարտավորությունները և արձանագրել թուրքական բոլոր վարչակարգերի կողմից այդ պարտավորությունների հետևողական խախտումների ժառանգականությունը:

Արժեքավոր են նաև Գ. Աբրահամյանի ու Տ. Սևան-Խաչատրյանի[16՝] ռուսական աղբյուրներից և Գ. Գոթիկյանի[17՝] ֆրանսիական արխիվների նյութերից կազմված ժողովածուները, որոնցում պարունակվող փաստաթղթերից լիարժեք պատկերացում է կազմվում Մեծ եղեռնի տարիներին Հայկական հարցում Անտանտի տերությունների վարած քաղաքականության և նրանց հետապնդած շահերի ու նպատակների մասին:

Դատական ատյաններում հայերի զանգվածային բնաջնջման, որպես ծանր հանցագործության դատապարտման առումով արժեքավոր են թուրքական ռազմական տրիբունալում երիտթուրքերի դատավարության և գերմանական դատարանում Թալեաթ փաշայի սպանության գործի՝ Ա. Փափազյանի[18] և Ս. Ստեփանյանի[19] թարգմանությամբ և խմբագրությամբ հրատարակված նյութերի ժողովածուները:

Միջազգային միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի բովանդակային քննարկման ու համեմատական վերլուծության համար կարևոր աղբյուր են

---

[10] Հայաստանի Ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր իմպերալիստական պատերազմի շրջանից, Ա. Հովհաննիսյանի առաջաբանով, Եր., 1926:

[11] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1917), խմբագիր Ջ. Կիրակոսյան, Եր., 1972:

[12] Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, второе, дополненное издание, Ер., 1983.

[13] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), Материалы Политархива Кайзеровской Германии, сост. отв. Редактор, автор примечаний д.и.н., профессор В. Микаелян, Ер., 1995.

[14] Сборник договоров России с другими государствами (1856–1917), М., 1952.

[15] Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Издание Литиздата НКИД, М., 1927; Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1914–1917, 14 января – 23 мая 1915, подготов. Ф. О. Нотович и др., серия III, т. 7, ч. 2, М., 1935.

[16] Русские источники о геноциде армян в Османской империи 1915–1916. Сост. Г. А. Абраамян, Т. Г. Севан-Хачатрян, Ер., 1995.

[17] Gotikian G., La question arménienne, de la vielle de la grande guerre au traité de Lausanne d'après les archives françaises. Thèse dactylographiée, Saint-Etienne, 1997, t. 3.

[18] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Եր., 1988:

[19] Судебный процесс Талаата паши. Стенографический отчет. Под редакцией С. Степаняна, Ер., 2007.

հանդիսացել Լ. Բարսեղյանի[20], Յու. Բարսեղովի[21], Հ. Սասունյանի[22] և Վ. Քոչարյանի[23] խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուները:

Հայոց ցեղասպանության, որպես միջազգային ծանր հանցագործության գնահատման և այդ հանցագործության հետևանքների հաղթահարման գործընթացում միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների կիրառման տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսացել միջազգային իրավական փաստաթղթերի ու կոնվենցիաների ժողովածուները[24]:

Ուսումնասիրություններ: Հայոց ցեղասպանության, որպես մարդկայնության դեմ կատարված հանցագործության, ուսումնասիրությամբ զբաղվել են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի որոշ մասնագետներ, փորձելով մատնանշել միջազգային իրավունքի տեսակետից Թուրքիայի պատասխանատվությունը հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած հանցագործության համար: Այս հարցում բավականին լուրջ ներդրում ունի հայազգի հայտնի իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը[25]: Հայ մասնագետներից այս հիմնահարցով Սփյուռքում և Հայաստանում զբաղվել են նաև Շ. Թորիկյանը[26], Վ. Տատրյանը[27], Պ. Օհանյա-

---

[20] Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, կազմող և ներածականի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1998; Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984–1987 թթ.), կազմող և առաջաբանի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1999; Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող, պատ. խմբ., հեղինակ Լ. Բարսեղյան, Եր., 2005:

[21] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю.Г.Барсегов, т. 1, М., 2002, т. 2, ч. 1, М., 2003. т. 2, ч. 2, М., 2005.

[22] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, Documents & Declarations compiled and with an introduction by H. Sassounian, Glendale, 2015.

[23] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, կազմող Վ. Քոչարյան, Եր., 2014:

[24] Ответственность за военные преступления и преступления против человечества. Сборник документов, М., 1969; Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., 1982; Нюрнбергский процесс. Сборник материалов в 8-и томах, т. 1, М., 1987, т. 8, М., 1999; Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 2002; Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001.

[25] Տե՛ս Барсегов Ю., Геноцид армян – преступление против человечества, Ер., 1990; Арбитражное решение президента США по армяно-турецкой границе, Ер., 1995; Ответственность государства за геноцид в международном праве, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997; Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999; Геноцид армян – преступление по международному праву, М., 2000; Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена “комиссии примирения” Гюндуз Актана), М., 2002; К вопросу о применимости конвенции 1948 года к геноциду армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 1, М., 2004; Новый этап признаний как условие реализации ответственности Турции за геноцид, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ер., 2005.

[26] Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ 1976: Հայասպանութիւնը եւ ամերիկեան քոնկրէսը, կազմող և ներածութեան հեղինակ Շ. Թորիկեան, Պէյրութ, 1978:

[27] Տե՛ս Dadrian V. N., The key elements in the Turkish denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification, Toronto, 1999; Дадриян В., Геноцид армян: содержание преступления, Ер., 2005; Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, “Геноцид – преступление против человечества. Материалы I московского международного симпозиума”, М., 1997.

նը[28], Հ. Հակոբյանը[29], Ի. Արաբյանը[30], Վ. Վարդանյանը[31], Ա. Պապյանը[32], Գ. Սաֆարյանը[33], Ռ. Դաքեսյանը[34] և ուրիշներ, իսկ օտարազգի մասնագետներից՝ Ա. դե Զայասը[35], Ջ. Վերհովենը[36], Իվ Թերնոնը[37], Շ. Բասիունին[38] և ուրիշներ: Նշված հեղինակների աշխատություններում վեր են հանվել Հայոց ցեղասպանության, որպես միջազգային ծանր քրեական հանցագործության հանցակազմի բաղադրատարրերը, ապացուցվել է հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության լիովին համապատասխանությունը 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ կատարված իրավական բնույթի ուսումնասիրությունները գերազանցապես նվիրված են հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործության իրավական որակման և միջազգային իրավունքի տեսակետից դրա դատապարտելի լինելու խնդիրներին: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցերին նվիրված ավելի սակավ իրավական հետազոտություններն էլ հիմնականում կրում են գիտատեսական բնույթ, մինչդեռ այդ խնդիրները հարկավոր է քննարկել գիտագործնական դաշտում և հստակեցնել այն հնարավորություններն ու հեռանկարները, որոնք ժամանակակից միջազգային իրավունքով ընձեռնվում են հայ ժողովրդին՝ ցեղասպանության իրագործմամբ իր խախտված իրավունքների վերականգնման համար:

---

[28] Տե՛ս Оганян П., Геноцид армянского народа и защита прав человека, Ер., 2004.

[29] Տե՛ս Հակոբյան Հ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000: Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002:

[30] Տե՛ս Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996:

[31] Տե՛ս Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր N 1(17), Եր., 2006, Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Եր., 2017; Հայոց ցեղասպանության վերաբերյալ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱՄՆ) համար կատարած իրավաբանական վերլուծության մասին, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 8, Եր., 2003; Основания международно-правовой ответственности за геноцид армян, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 3, Ер., 2005.

[32] Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007; Հնչեցրե՛ք զանգերը, սա մեր վերջին Սարդարապատն է, Եր., 2009: Հայոց պահանջատիրության հիմնախնդիրներն ու հեռանկարները, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Եր., 2012:

[33] Տե՛ս Սաֆարյան Գ., Հայոց ցեղասպանության պատմահրավական ասպեկտները, Եր., 2015:

[34] Տե՛ս Դաքեսյան Ռ., 1915 թ. հայերի դեմ իրագործված կոտորածների իրավաբանական հետևանքները և դրանց լուծման դատական ու արտադատական հնարավոր եղանակները, Եր., 2015:

[35] Տե՛ս Alfred de Zayas, Memorandum on the genocide against Armenians 1915–1923 and the application of the 1948 Genocide Convention, 2004.

[36] Տե՛ս Verhoeven Joe, The Armenian People and International Law// A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent Peoples' Tribunal, London, 1985.

[37] Տե՛ս Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., 2003:

[38] Տե՛ս Bassiouni Cherif, Crimes Against Humanity in International Criminal Law, Dordrecht/Boston; London, 1992.

Միանգամայն բնական պետք է համարել այն, որ միջազգային իրավունքի ոլորտում կատարված ուսումնասիրություններից բացի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրները քննարկման առարկա են դառնում նաև քաղաքագիտական բնույթի աշխատություններում: Վերջին տարիներին հրատարակվեցին Թուրքիայի ներքաղաքական զարգացումների լույսի ներքո Հայոց ցեղասպանության հիմնահարցի քննարմանը նվիրված հայ հետազոտողների աշխատանքները, որոնք խիստ սակավ են և վերաբերում են առաջադրված հարցադրման նեղ խնդիրներին: Այսպես, Ռ. Մելքոնյանի[39], Կ. Խանլարյանի[40], Հ. Ալվրցյանի[41] և այլոց արժեքավոր աշխատությունները նվիրված են Հայոց ցեղասպանության և դրան հաջորդած տարիներին թուրքական իշխանությունների կողմից բռնի իսլամացված և ծպտյալ հայության խնդիրներին:

Լ. Հովսեփյանը[42], Ռ. Մելքոնյանը[43], Ա. Հովհաննիսյանը[44] և Մ. Անումյանը[45] իրենց աշխատանքներում քննարկում են թուրքական գործադիր ու օրենսդիր մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ընկալման որոշ խնդիրներ, իսկ թուրք հասարակության կողմից Հայոց ցեղասպանության հարցի որոշ ընկալումներն արտացոլվել են «Ակօսի» խմբագրապետ Հր. Դինքի[46] աշխատության մեջ:

Ուշագրավ են Կ. Խանլարյանի[47] ու Ն. Հովհաննիսյանի[48] կատարած ուսումնասիրությունները, որոնցում Հայոց ցեղասպանության և դրա հետևանքների հաղթահարման հարցը քննարկվում է Քրդական հարցի և քրդերի ազատագրական պայքարի հոլովույթում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից: Աշխատության ծավալը կազմում է 388, իսկ հավելվածը՝ 26 էջ:

---

[39] Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Եր., 2009:

[40] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:

[41] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014:

[42] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:

[43] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014 թթ.): «Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր», Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014:

[44] Տե՛ս Հովհաննիսյան Ա., «Հայկական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում: «Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան», հ. I, Ռ. Սաֆրաստյանի խմբ., Եր., 2012:

[45] Տե՛ս Անումյան Մ., Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ: «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», N VII, Եր., 2011:

[46] Տե՛ս Դինք Հր., Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, Եր., 2009:

[47] Տե՛ս Խանլարեան Կ., Քրդական շարժումների դիրքորոշումը Հայաստանի հայութեան եւ Հայ Դատի նկատմամբ, «Հայ դատն այսօր», Թէհրան, 2005:

[48] Տե՛ս Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Եր., 2016:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հստակեցվում է «Հայոց ցեղասպանության հետևանքներ» ձևակերպման բովանդակությունը, ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանությունը, օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին ենթագլուխ – Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածում գործող միջազգային իրավունքի կողմից այդ հանցագործության որակման խնդիրը:

XVIII դարից սկսած միջպետական հարաբերություններում սկսեցին արմատավորվել մարդասիրության սկզբունքները, ինչի հետևանքնով միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում սկսեցին գործնականում կիրառվել մարդասիրական միջամտություններ[49]: XVIII- XIX դարերի ընթացքում եվրոպական տերությունները առանձին-առանձին և կոլեկտիվ Օսմանյան կայսրության նկատմամբ իրականացրեցին բազմաթիվ մարդասիրական միջամտություններ, որոնք ուղղված էին նրա տարածքում բնակվող քրիստոնյա տարբեր ժողովուրդների իրավունքների պաշտպանությանը[50]:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին մարդասիրության սկզբունքները վերջնականապես ամրագրվեցին միջազգային իրավունքում, իբրև նրա անբաժանելի մասը: «Մարդկության օրենքներ» ձևակերպումն առաջին անգամ իր տեղը գտավ Հաագայի 1899 թ. խաղաղության առաջին և 1907 թ. երկրորդ կոնֆերանսներում ընդունված «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին» երկրորդ և չորրորդ կոնվենցիաներում սահմանվեցին «մարդկայնության» և «մարդկության օրենքների» սկզբունքները, որոնցով դատապարտվում էին խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններն ու կոտորածները[51]:

Այսպիսով՝ 1899 թ. և 1907 թ. Հաագայի երկրորդ և չորրորդ կոնվենցիաներով խաղաղ բնակչության զանգվածային սպանությունները որակվում էին որպես «մարդկության դեմ կատարված հանցագործություն», ինչի համար պետությունները կարող էին պատասխանատվության կանչվել: Այդ կոնվենցիաների դրույթների հիման վրա 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության մեջ դատապարտվեցին հայերի զանգվածային սպանությունները՝ սպառնալով պատասխանատվության կանչել այդ հանցագործությունների հետ առնչություն ունեցող օսմանյան կառավարության անդամներին ու տեղական պաշտոնյաներին[52]: «Մարդկայնության» և «մարդկության օրենքների» սկզբունքները ոչ թե պատահականորեն, այլ օրիանաչափորեն արտացոլվեցին նաև ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և

---

[49] Տե՛ս Dadrian V. N., Genocide as a problem of National and International Law. The World War I Armenian Case and its Contemporary Legal Ramifications, “Yale Journal of International Law”, 1989, Vol. 14, N 2, p. 33.

[50] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1917), խմբագիր Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 13:

[51] Տե՛ս Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915–1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Եր., 2002, էջ 77:

[52] Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства, серия III, т. 7, ч. 2, с. 252.

դրա համար պատժի մասին» (1948 թ.) ու «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968 թ.) կոնվենցիաներում: Այսպիսով՝ էթնիկ կամ կրոնական խմբերի, մասնավորապես հայերի նկատմամբ իրականացված զանգվածային բնաջնջման քաղաքականությունը նախքան Հայոց ցեղասպանությունը, դրա ընթացքում և դրանից հետո գործող միջազգային իրավունքի նորմերի համաձայն, անկախ «գենոցիդ» եզրույթի կիրառումից, պատասխանատվություն ենթադրող հանցագործություն է համարվել:

Երկրորդ ենթագլուխ – Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության իրավասուբյեկտության հարցը:

Թուրքիայի Հանրապետության Օսմանյան կայսրության միջազգային իրավական ինքնության շարունակող լինելը գործնականում հաստատվեց Լոզանի համաժողովից հետո, երբ քննարկվում էր նախկին Օսմանյան կայսրության պարտքի հարցը: 1925 թ. միջազգային իրավարար է. Բորելի կայացրած իրավարար վճռով սահմանվեց, որ Թուրքիայի իրավական կարգավիճակը տարբերվում է Օսմանյան կայսրության նախկին տարածքներում առաջացած մյուս պետությունների կարգավիճակից և որ ըստ միջազգային իրավունքի Թուրքիան պետք է վճարի Օսմանյան կայսրության պարտքը, որի ինքնությունն այն շարունակում է[53]: Այս վճռի հիման վրա Թուրքիան ստանձնեց Օսմանյան կայսրության պարտքի վճարման պարտավորությունը և այդ գործընթացը տևեց մինչև 1944 թ. հունիսը[54]: Թուրքիայի Հանրապետության կողմից Օսմանյան կայսրության նախկին պարտքի մարումը նշանակում է, որ Թուրքիան նույնպես ընդունեց իր՝ Օսմանյան կայսրության ինքնության շարունակողը լինելը, ուստի նա կարող է պատասխանատվության կանչվել նաև Օսմանյան կայսրության կողմից կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության համար:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իմաստով կարևոր է նաև Հայաստանի երրորդ Հանրապետության կողմից ժամանակակից Թուրքիային միջազգային-իրավական պահանջներ ներկայացնելու կամ միջազգային դատական ատյաններում որպես հայցվոր կողմ հանդես գալու իրավունքի հարցի հստակեցումը: Անշուշտ, միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը կարող է ներկայացնել ու պաշտպանել Հայոց ցեղասպանության այն զոհերի ու վերապրածների այն ժառանգների շահերն ու իրավունքները, որոնք հանդիսանում են իր քաղաքացիները: Ինչ վերաբերում է արևմտահայերի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը, ապա Հայաստանի Հանրապետությունը կարող է ստանձնել այդ իրավունքն այն դեպքում, եթե արևմտահայերի լիազոր և իրավասու մարմինն օժտել է նրան նման իրավունքով:

1919 թ. փետրվարի 12-ին Արևմտահայերի Երկրորդ համագումարը Հայաստանի առաջին Հանրապետությանը լիազորեց արևմտահայերի Գործադիր մար-

---

[53] Տե՛ս Verhoeven Joe, The Armenian People and International Law// A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent Peoples' Tribunal, London, 1985, p. 206-207.

[54] Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 179:

մնի հետ միասին քայլեր ձեռնարկել Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակման ուղղությամբ[55]: Նույն թվականի մայիսի 28-ին՝ անկախության տարեդարձի օրը, Հայաստանի առաջին Հանրապետության կառավարությունն ընդունեց «Ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի» հռչակագիրը, որով հանրապետության իշխանություններն իրենց ազդարարեցին նաև Արևմտահայաստանի տերը[56]:

Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդ[57] և հայության օրինական շահերի արտահայտիչ, իրավասու է միջազգային-իրավական պահանջները ներկայացնել Թուրքիային կամ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով որպես հայցվոր կողմ հանդես գալ միջազգային դատական ատյաններում:

Երրորդ ենթագլուխ – Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հարցը:

Միջազգային իրավունքի տեսակետից խիստ կարևոր է նաև Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կիրառելիության հարցի հստակեցումը, այսինքն՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ կոնվենցիայի հետադարձ ուժի հարցը:

Պետք է նշել, որ հենց ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի բովանդակությունից, մասնավորապես նախաբանից ու առաջին հոդվածի ձևակերպումներից հստակորեն երևում է այն ընդունած պետությունների կողմից տվյալ փաստաթղթի դրույթները նաև ռետրոակտիվ՝ հետադարձ ուժով, կիրառելու մտադրությունը[58]: Հատկանշական է, որ 1951 թ. մայիսի 28-ին Գլխավոր Ասամբլեայի խնդրանքով ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը խորհրդատվական եզրակացություն հրապարակեց Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի դրույթների կիրառելիության հետ կապված, որում հստակ նշվում էր, որ կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից որպես պարտադիր՝ անգամ առանց պայմանագրային ամրագրման[59]: ՄԱԿ-ի միջազգային դատարանի այս ձևակերպմամբ փաստորեն արձանագրում էր 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի կոդիֆիկացնող փաստաթուղթ լինելու հանգամանքը, որն իր մեջ ներառել է միջազգային սովորության իրավունքի այն նորմերը, որոնք նախկինում ճանաչված են եղել իբրև պարտադիր և առանց պայմանագրային ամրագրման կիրառվել են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից: Ասվածից բխում է, որ կոնվենցիայի ստորագրման և ուժի մեջ մտնելու ամսաթվերով չի կարող սահմանափակել այդ փաստաթղթի դրույթների նաև հետադարձությամբ կիրառվելը:

Բացի այդ, Ցեղասպանության մասին 1948 թ. կոնվենցիայի ընդունումից 20 տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ն ընդունեց նաև «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունե-

---

[55] Մելիքեան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Եր., 2007, էջ 10:

[56] Մելքոնյան Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Եր., 2011, էջ 387:

[57] Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 200:

[58] Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, с. 780.

[59] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, с. 32.

րի նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցիան, որով սահմանվում էր, որ «անկախ կատարման ժամկետից պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության որևէ ժամկետներ չեն կիրառվում[60]: Տվյալ փաստաթղթով մարդկության դեմ կատարված հանցագործություն է համարվում նաև ցեղասպանության հանցագործությունը, որը սահմանված է ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայով[61]:

Ի վերջո, չպետք է անտեսել այն փաստը, որ Թուրքիան շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը, իսկ հայ ժողովուրդը շարունակում է կրել այդ հանցագործության հետևանքները, ուստի գործ ունենք շարունակվող հանցագործության հետ, իսկ տվյալ պարագայում ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձությամբ կիրառելու հարց առհասարակ չի կարող առաջանալ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ

Ատենախոսության երկրորդ գլխի ենթագլուխներում համակողմանիորեն քննարկվում են Սան Ստեֆանոյի, Բեռլինի, ինչպես նաև 1879 թ. և 1914 թ. ռուս-թուրքական պայմանագրերով Հայկական հարցում Օսմանյան կայսրության ստանձնած միջազգային պարտավորությունները: Արձանագրվում է, որ Բ. Դուռը ոչ միայն քայլեր չի ձեռնարկում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ, այլև հետևողականորեն խախտում էր այդ փաստաթղթերով հայ ժողովրդի օրինական շահերին ու իրավունքներին վերաբերող դրույթները:

Քննության են առնվում 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրով հայերի զանգվածային սպանությունները մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված հանցագործություն որակվեցին, որի համար Օսմանյան կայսրության կառավարության անդամների և տեղական մարմինների պաշտոնյաների պատասխանատվություն սահմանվեց[62]: Հատկանշական է, որ 1948 թ. մայիսի 28-ին ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի ընդունումից առաջ ՄԱԿ-ի Պատերազմական հանցագործությունների հանձնաժողովը Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում հայերի զանգվածային սպանություններին տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» ձևակերպումը նույնական համարեց այն հանցագործությունների հետ, որոնք Նյուրնբերգյան դատավարության ժամանակ միջազգային իրավունքի կողմից որակվեցին որպես սեփական հպատակների նկատմամբանմարդկային գործողություններ, այսինքն՝ ցեղասպանություն[63]:

---

[60] Права человека. Сборник международных договоров, с. 786.

[61] Նույն տեղում, էջ 787:

[62] Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, Ер., 1983, с. 280.

[63] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 651.

Անտանտի տերությունների գաղտնի համաձայնագրով Արևմտյան Հայաստանի տարածքների բաժանման հարցի[64] քննարկման արդյունքում արձանագրվում է, որ Ասիական Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բաժանման գաղտնի համաձայնագիրը նահանջ էր տերությունների մինչպատերազմյան մարդասիրական միջամտությունների քաղաքականությունից, քանզի թուրքական լծից ժողովուրդներին ազատագրելու սկզբունքը տերությունների կողմից քողարկված ձևով փոխակերպվում էր «ազատագրվողե ժողովուրդների բնակության տարածքների բռնակցումով[65]:

Երրորդ գլխի հաջորդ գլուխներում վերլուծվում են նախկինում կնքված համաձայնագրերով Հայկական հարցի լուծմանը և Հայաստանի իրավունքներին վերաբերող իր համար անբարենպաստ դրույթները՝ Բրեստ Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով փոփոխելու Օսմանյան կայսրության ջանքերը, որոնք կատարվում էին միջազգային իրավունքի, մասնավորապես պայմանագրային իրավունքի համընդհանուր սկզբունքների ու նորմերի խախտումներով[66]: Հաջորդաբար քննարկվում են նաև Բրեստ Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի հայ ժողովրդի և Հայաստանի իրավունքները ոտնահարող դրույթները չեզոքացնող Մուդրոսի զինադադարի հոդվածները[67]:

Առանձին ենթագլուխ է նվիրված Հայաստանի իրավունքներին վերաբերող և հայերի զանգվածային բնաջնջման համար Օսմանյան կայսրության պատասխանատվություն նախատեսող Սևրի պայմանագրի[68] դրույթների քննությանը: Ենթագլխում հիմնավորվում է այն թեզը, որ, չլինելով վավերացված, Սևրի պայմանագիրը մասնակիորեն գործադրվել է այն ստորագրողների կողմից՝ արաբական հողերի Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը տեղի ունեցավ հաջորդ՝ Լոզանի դաշնագրից ստորագրումից առաջ[69]:

Երրորդ գլխում քննարկվում է նաև հայ-թուրքական սահմանի սահմանագծման հարցով ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած իրավարար վճիռը: Ընդգծվում է, որ Վիլսոնի իրավարարության գործընթացը սկսվել էր մինչև Սևրի պայմանագրի կնքումը, հետևաբար այն միանգամայն ինքնուրույն միջազգային-իրավական գործընթաց էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի, իբրև դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի անդամների, մի կողմից և Վուդրո Վիլսոնի, իբրև ԱՄՆ-ի նախագահի, մյուս կողմից[70]: Հատուկ անդրադարձ է կատարվում Սևրի պայմանագրի և Վիլսոնի իրավարար վճռի հարաբերակցության հարցին: Արձանագրվում է, որ թեև հայ-թուրքական սահմանգծման հարցով նախաձեռնված և իրականացված իրավարարությունը սկսվել էր հաղթանակած տերությունների քաղաքական որոշման ու կամքի հիման վրա, այդուհանդերձ, այն ոչ միայն չի հակասել, այլև կատարվել է տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերին համապատասխան: Այսպես, Հաագայի 1899 թ. «Միջազգային հակամարտությունների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի 54-րդ և 1907 թ. խմբագրված նույն կոնվենցիայի 81-

---

[64] Տե՛ս «Հայաստանի Ավտոնոմիան» և Անտանտան, էջ 121:

[65] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 185.

[66] Տե՛ս Документы внешней политики СССР, Госполитиздат, М., 1957, т. 1, с. 491.

[67] Տե՛ս Հայաստանը … փաստաթղթերում, էջ 538-539:

[68] Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, пер. с фр., Литиздат НКИД, М., 1927.

[69] Տե՛ս Թորիկյան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 132-134:

[70] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 182.

րդ հոդվածներում նշվում է, որ եթե իրավարար վճիռը կայացել է ըստ կարգի և դրա մասին իրազեկ են պահվել կողմերի գործակալները, ապա խնդրո առարկա վեճը լուծվում է մեկընդմիշտ և ենթակա չէ բեկանման[71]: Դիմելով իրավարարության, կողմերը պարտավորվում են հարգել իրենց վերաբերող իրավարարի որոշումը, որը կողմերի համար պարտադիր է և ենթակա չէ վավերացման[72]: Այսինքն՝ որևէ պայմանագրի, տվյալ դեպքում՝ Սևրի, ստորագրված կամ վավերացված լինել-չլինելը չի կարող ազդեցություն ունենալ իրավարար վճռի օրինականության կամ ուժի մեջ լինելու վրա:

Այսպիսով, հայ-թուրքական սահմանի հստակեցման վերաբերյալ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն արդիական է և կարող է լուրջ կռվան հանդիսանալ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների վերացման համար:

Երրորդ գլխում առանձին ենթագլուխ նվիրված է Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Սևրի համաձայնագիրն ու Վիլսոնի իրավարար վճիռը չեղարկելու Քեմալական Թուրքիայի ջանքերին: Համակողմանի վերլուծության ենթարկելով նշված փաստաթղթերի բովանդակությունը, եզրակացվում է, որ դրանք կնքվել են տվյալ պահին գործող միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումներով: Այդ փաստաթղթերի ստորագրման պահին վաղուց ուժի մեջ էին մտել դեռևս Հաագայի Խաղաղության կոնֆերանսի ընթացքում 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային հակամարտությունների խաղաղ կարգավորման մասինե և «Պայմանագրային պարտավորությունների կատարման հարցում ուժի կիրառման սահմանափակման մասինե կոնվենցիաները, որոնցում շեշտադրվում էին այն սկզբունքները, որ պետությունների անվտանգության ու ժողովրդների բարեկեցության հիմքում պետք է դրվեն իրավունքի ու արդարության սկզբունքները, իսկ պետությունները չպետք է դիմեն ռազմական ուժի այլ պետությունների նկատմամբ պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով[73]: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո նշված սկզբունքները ավելի հստակորեն տեղ գտան Ազգերի լիգայի Կանոնադրության մեջ, որտեղ ամրագրվում էին ազգերի միջև հարաբերություններում ստանձնած պարտավորությունները հարգելու և կատարելու, ինչպես նաև պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը չխախտելու սկզբունքները: Նշված սկզբունքները խախտելու դեպքում, Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն, արդարությունն ու խաղաղությունը վերականգնելու նպատակով կազմակերպությունն իրավասու էր դիմել պատժամիջոցների, ընդհուպ մինչև ռազմական ուժ կիրառել[74]: Այս դրույթները հետագայում վերահաստավեցին միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերն ու սկզբունքները կոդիֆիկացնող Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասինե կոնվենցիայում որպես jus cogens, այսինքն՝ պարտադիր ու անբեկանելի համարվող նորմեր: Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն միջազգային պայմանագիրն առ ոչինչ

---

[71] Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 302:

[72] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 182.

[73] Տե՛ս Международное право. Ведение военных действий.Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001.

[74] Տե՛ս Версальский мирный договор. Полный перевод с французского под редакцией Ю. В. Ключникова и А. Сабанина. М., 1925, с. 7–15.

է, եթե նրա ստորագրումը հանդիսանում է ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք[75]: Այս հանգամանքներից ելնելով, իր համար բարենպաստ աշխարհաքաղաքական կամ տարածաշրջանային իրադրության առաջացման պարագայում Հայաստանն իրավասու է վիճարկել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի օրինականությունը:

Երրորդ գլխի վերջին ենթագլուխը նվիրված է ոչ մահմեդական փաքրամասնությունների իրավունքների պաշտպանության՝ Լոզանի պայմանագրով ստանձնած Թուրքիայի նոր պարտավորությունների քննությանը: Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածներով թուրքական կառավարությունը պարտավորվեց երաշխավորել ոչ մահմեդական թուրքահպատակ փոքրամասնությունների կյանքի և գույքի պաշտպանությունը, մահմեդականների հետ հավասար քաղաքացիական և քաղաքական իրավունքները, մասնավորապես՝ իրենց կրոնն ու լեզուն ազատորեն գործածելը, բարեսիրական, կրոնական կամ ընկերային հաստատություններ հիմնադրելն ու ղեկավարելը: Թուրքական իշխանությունները պարտավորվում էին նաև ապահովել ոչ մահմեդական փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգների, գերեզմանատների և կրոնական այլ հաստատությունների պաշտպանությունը և պահպանությունը[76]: Փաստաթղթի 44-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում էր ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների հարցերով վեճերը դատական կարգով լուծելու հնարավորությունը: Պայմանագրի մասնակից պետություններից մեկի պահանջով հարցը կարող էր տեղափոխվել Արդարադատության միջազգային մշտական պալատ, որի վճիռը պետք է լինի վերջնական[77]: Այս դրույթից ելնելով, Լոզանի պայմանագրի անդամ պետություններից յուրաքանչյուրն այսօր էլ Թուրքիայի ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության հարցերով գործնականում կարող է դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՅԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Առաջին ենթագլուխ – Հայերի ցեղասպանության փաստի ճանաչումն ու դատապարտումը օսմանյան խորհրդարանի կողմից:

Առաջին աշխարհամարտի ավարտին օսմանյան խորհրդարանում ակտիվացավ հայ, հույն և արաբ պատգամավորների գործունեությունը, որոնք 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրենց ելույթներով, գրավոր ու բանավոր հարցապնդումներով երկրի օրենսդիր մարմնում կարողացան հասնել թուրքական իշխանությունների կողմից ոչ մահմեդականներին, մասնավորապես հայերին զանգվածային բնաջնջման ենթարկելու փաստերի թեև անուղղակի, բայց ճանաչմանն ու դատապարտմանը: 1918 թ. նոյեմբերի 4-ին օսմանյան խորհրդարանը չեղարկեց երիտթուրքական կառավարության կողմից ընդունված և գործադրված 1915 թ. մայիսի 30-ի «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը, որը հանցավոր վարչակարգի համար «իրավական հիմք» հանդիսացավ հայերի զանգվածային բռնագաղթն ու բնաջնջումն իրականաց-

---

[75] Международное право в документах, с. 86.

[76] Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 186:

[77] Տե՛ս նույն տեղում:

նելու համար, փաստորեն ճանաչեց երիտթուրքական կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության փաստը[78]:

Պատերազմի ընթացքում նախկին երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունները, այդ թվում՝ հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով օսմանյան խորհրդարանի կողմից ստեղծվեց հինգերորդ հանձնաժողովը[79], որի հարցաքննությունների նյութերը հետագայում փոխանցվեցին թուրքական ռազմական տրիբունալներին և հիմք դարձան դրանց գործունեության համար[80]:

Երկրորդ ենթագլուխ Օսմանյան ռազմական տրիբունալների կողմից հայերի զանգվածային սպանությունների դատապարտումը. երիտթուրքերի ու նացիստ հանցագործների դատավարությունների համեմատական վերլուծությունը:

Առաջին աշխարհամարտում կրած պարտությունից հետո Օսմանյան կայսրությունը փորձում էր կանխել թուրքական նախկին կառավարության անդամների հնարավոր դատավարությունը Անտանտի հաղթանակած տերությունների կողմից ստեղծվելիք միջազգային տրիբունալում: Գիտակցելով, որ նման դատավարության ընթացքում պատերազմի ընթացքում երիտթուրքերի կատարած ծանր հանցագործությունների պատասխանատվությունը կարող է ընկնել նաև թուրքական պետության վրա, սուլթանի հրամանով ձևավորված թուրքական ռազմական տրիբունալներում արագ նախաձեռնվեց երիտթուրքերի դատավարությունը:

Թուրքական ռազմական տրիբունալում երիտթուրք պարագլուխների դատավարությունն իրենից հետաքրքրություն է ներկայացնում այնքանով, որքանով այդ դատական գործի մեղադրական եզրակացությունների և դատավճռի մեջ պարունակվում են Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածների այնպիսի մեղադրանքներ, որոնք լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայում սահմանված այդ հանցագործության հանցակազմի հատկանիշներին: Օրինակ, մեղադրական եզրակացություններից մեկում նշվում էր, որ տեղահանությունը կանխամտածված էր, որ այդ որոշումը կայացվել էր Իթթիհադ կուսակցության կենտրոնական կոմիտեում և դրա ողբերգական հետևանքները զգացվեցին Օսմանյան կասրության գրեթե բոլոր անկյուններում[81]: Դատավարության նյութերում արձանագրվում էր նաև, որ երիտթուրքերի ընդունած համընդհանուր ծրագրի իրագործման նպատակն է եղել «վերջնականապես լուծել չլուծված խնդիրները» և դրանցից առաջին տեղն էր զբաղեցնում Հայկական հարցը[82]:

Թուրքական ռազմական տրիբունալները հայերի զանգվածային կոտորածների գլխավոր կազմակերպիչներին հեռակա կարգով մահվան դատապարտեցին նաև օսմանյան քրեական օրենսգրքի կանխամտածված սպանություն կատարելու հոդվածով, ինչը առանցքային նշանակություն ունի ցեղասպանութ-

---

[78] Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուոթրթաուն, 1995, էջ 19:

[79] Նույն տեղում, էջ 11:

[80] Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում..., էջ 20:

[81] Дадриян В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, “Геноцид – преступление против человечества”. Материалы I московского международного симпозиума”, М., 1997, с. 43.

[82] Барсегов Ю. Г., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 39.

յան հանցագործության որակման համար և ամրագրված է 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում[83]:

Տվյալ ենթագլխում կատարվում է նաև թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրքերի և Նյուրնբերգյան տրիբունալում նացիստ հանցագործների մեղադրական եզրակացությունների և դատավճիռների համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում պարզվում է, որ թեև իրենց կարգավիճակով այդ դատական մարմինները տարբեր էին, թուրքական ռազմական տրիբունալները ազգային, իսկ Նյուրնբերգյան տրիբունալը՝ միջազգային դատական ատյաններ էին, այդուհանդերձ, երկու դատական ատյաններում էլ հանցագործները պատասխանատվության էին ենթարկվում միևնույն՝ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների, իմա՝ ցեղասպանության համար: Ուստի միջազգային դատական ատյանում Հայոց ցեղասպանության դատապարտման գործում Նյուրնբերգյան դատավարության նյութերը կարող են նախադեպային նշանակություն ունենալ:

Երրորդ ենթագլուխ – Հայոց ցեղասպանության փաստի անուղղակի ճանաչումը գերմանական դատարանի կողմից. Սողոմոն Թեհլերյանի և Ադոլֆ Էյխմանի դատական գործերի համեմատական վերլուծությունը:

Թալեաթ փաշայի սպանության գործով գերմանական դատարանում ընթացած Թեհլերյանի դատավարությունը ոչ միայն իրավական, այլև քաղաքական ու բարոյական նշանակություն ուներ թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար, քանզի գերմանական դատարանը վճռում էր հայերի զանգվածային սպանությունների նկատմամբ իր վերաբերմունքի հարցը: Ավելին՝ սա ոչ թե Թեհլերյանի, այլ հենց Թալեաթի դատավարությունն էր, որի ընթացքում քննարկվում էր նաև Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը հայերի զանգվածային սպանությունների համար: Հատկանշական է, որ տվյալ հարցը քննարկվում էր Օսմանյան կայսրության նախկին դաշնակից Գերմանիայի դատարանում:

1921 թ. հունիսի 3-ին երդվյալների որոշման համաձայն Սողոմոն Թեհլերյանը Թալեաթ փաշայի սպանության մեջ մեղավոր չէր ճանաչվում: Ատենակալների որոշման հիման վրա գերմանական դատարանը վճռեց արդարացնել Թեհլերյանին[84]: Գերմանական դատարանը, փաստորեն, հիմնվելով երիտթուրքերի դատավարության թուրքական ռազմական տրիբունալի դատավճիռների վրա, արդարացրեց հայերի զանգվածային սպանությունների կազմակերպիչներից մեկին՝ Թալեաթ փաշային հայտնաբերողին և վնասազերծողին՝ Սողոմոն Թեհլերյանին:

Տվյալ ենթագլխում կատարվում է նաև գերմանական դատարանում Թալեաթ փաշայի սպանության և իսրայելական դատարանում նացիստ հանցագործ, հրեաների Ողջակիզման կազմակերպիչ Ադոլֆ Էյխմանի[85] դատական գործերի համեմատական վերլուծություն: Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ երկու դեպքում էլ դատարանները քննում էին ցեղասպանության հանցագործության կատարման մեջ մեղադրվող և արդարադատությունից խուսափող հանցագործների քրեական գործեր: Թալեաթը փորձում էր խուսա-

---

[83] Տե՛ս Права человека. Сборник международных договоров, с. 780.

[84] Судебный процесс Талаата паши. Стенографический отчет. Под редакцией С. Степаняна, Ер., 2007, с. 241.

[85] Տե՛ս Schabas W., Genocide in International Law, Cambridge University Press, 2000, p. 387.

փել թուրքական ռազմական տրիբունալի, իսկ էյխմանը՝ Նյուրնբերգյան տրիբունալի կայացրած մահվան վճիռներից: Երկուսն էլ հայտնաբերվեցին և մի դեպքում մահվան վճիռն ի կատար ածվեց հայ վրիժառու Թեհլերյանի, իսկ մյուս դեպքում՝ հրեական պետության կողմից[86]: Երկու քրեական գործերի ու կայացրած դատավճիռների համեմատական վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն Օսմանյան կայսրության նախկին դաշնակից Գերմանիայի դատարանի կողմից Թալեաթին վնասազերծած հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանին ազատ արձակելու վճռի, նացիստ հանցագործ էյխմանին Իսրայելի դատարանի կողմից մահվան դատապարտելը լիովին կանխատեսելի էր:

Չորրորդ ենթագլուխ – Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի քննությունը՝ այդ հանցագործության հետևանքների հաղթահարման համատեքստում:

Այս ենթագլխում տարբեր երկրների օրենսդիր մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի, հայտարարությունների ու օրենքների տեքստերը քննվում են այդ հանցագործության հետևանքների հաղթահարման լույսի ներքո: Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունները բաժանվում են այդ հանցագործությունը պաշտոնապես և ոչ պաշտոնապես ճանաչած երկրների խմբերի:

Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական մակարդակով ոչ պաշտոնապես ճանաչած պետություններ են համարվում այն երկրները, որոնց օրենսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ճանաչման գործընթացը ընթացակարգային կամ բովանդակային պատճառներով տրամաբանական ավարտին դեռևս չի հասցվել: Ընթացակարգային պատճառներով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետությունները երկպալատ օրենսդիր մարմին ունեցող այն երկրներն են, որոնց խորհրդարանների պալատներից միայն մեկն է համապատասխան բանաձև ընդունել: Բովանդակային պատճառով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետություններն այն երկրներն են, որոնց խորհրդարանների ընդունած բանաձևերում հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը «ցեղասպանությունե չի որակվել[87]:

Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչումները թեև չեն հանգեցնում Թուրքիայի կողմից այդ հանցագործության ճանաչմանը, այդուհանդերձ, դրանք հանդիսանում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի հիմնական ուղղություններից մեկը: Խորհրդարանական բանաձևերի ընդունումով ոչ միայն բարոյական և քաղաքական ճնշում է գործադրվում թուրքական իշխանությունների վրա՝ սահմանափակելով նրանց ժխտողական քաղաքականության հնարավորությունները, այլև իրավաքաղաքական հիմքեր են նախապատրաստվում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Թերևս այս գիտակցությունից ելնելով է, որ թուրքական իշխանությունն-

[86] Տե՛ս A-G Israel v. Eichmann, (1968) 36 ILR 5, Paras. 20-22. District Court Jerusalem, December 11, 1961, "The Attoreney General of the Government of Israel v. Eichmann (case No. 40/61)," American Journal of International Law, 1962, p. 814.

[87] Տե՛ս The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, Documents & Declarations compiled and with an introduction by H. Sassounian, Glendale, 2015, p. 40.

ները մեծ ջանքեր են գործադրում ամեն մի նոր երկրի կողմից խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումը թույլ չտալու համար:

Հինգերորդ ենթագլուխ – Միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի քննությունը՝ այդ հանցագործության հետևանքների հաղթահարման համատեքստում:

Երրորդ գլխի վերջին ենթագլխում միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը, ինչպես նաև այդ կառույցների կողմից ընդունված բանաձևերի տեքստերը քննվում են այդ հանցագործության հետևանքների հաղթահարման լույսի ներքո: Առաջին հերթին քննարկվում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը և ընդունված որոշումները միջազգային միջկառավարական կազմակերպություններում՝ Ազգերի լիգայում, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովում, այնուհետև նաև Գլխավոր Ասամբլեայում, եվրոպական միջկառավարական կառույցներում՝ Եվրոխորհրդարանում, ԵԽԽՎ-ում և այլն: Այնուհետև քննության են առնվում միջազգային ոչ կառավարական հեղինակավոր միջազգային կազմակերպությունների՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Ժողովուրդների մշտական դատարանի, Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության կողմից Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումներն ու ընդունված որոշումները:

Կարևորվում է միջազգային միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման որոշումները ռացիոնալացնելու, դրանք գործնական դաշտ տեղափոխելու խնդիրը: Եզրակացվում է, որ այդ կառույցների հետ հարկավոր է շարունակել համագործակցությունը, որպեսզի Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատական ատյանին դիմելու ժամանակ նրանք պատրաստ լինեն սատարելու Հայաստանին և հայ ժողովրդին:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին ենթագլուխ - Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը:

Առաջին ենթագլխում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցը քննարկվում է աշխարհաքաղաքական գործընթացների և տարածաշրջանային զարգացումների լուսի ներքո, որոնք որոշակի ազդեցություն կարող են ունենալ տվյալ հարցի հանգուցալուծման վրա:

Թուրքիայի նախկին արտգործնախարար և վարչապետ Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորք» աշխատության հիման վրա երկրի արտաքին քաղաքականության մեջ ամրագրվեց նեոօսմանականության հայեցակարգը: Նոր հայեցակարգում առաջ է քաշվում Թուրքիայի կողմից տարածաշրջանային խնդիրների լուծման գործում Օսմանյան կայսրության փորձառության կիրառման խնդիրը, ինչը նշանակում է, որ առնվազն նախկին Օսմանյան կայսրության և դրան հարակից տարածքներում՝ Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկա, Մերձավոր Արևելք, Անդրկովկաս, Կենտրոնական Ասիա և այլն, Թուրքիան պետք է վերածվի «տարածաշրջանային կարգ հաստատողի» ու «կենտրոնա-

կան երկրի»[88]: Թուրքիայի ոչ միայն տարածաշրջանային հեգեմոն, ինչպես նաև համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատար դառնալու անթաքույց այս հավակնությունները մտահոգիչ ու անընդունելի են համաշխարհային քաղաքականության ուժային այնպիսի կենտրոնների համար, ինչպիսիք են ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Ռուսաստանը և Չինաստանը:

Նեոօսմանականության վրա հիմնված Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հետևանքով ավելի խորացան դեռ ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-Թուրքիա, ԵՄ-Թուրքիա և Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում առկա խնդիրները, դրանց ավելացան համաշխարհային քաղաքականության կարևոր հարցերի վերաբերյալ Թուրքիայի և նշված ուժային կենտրոնների դիրքորոշումների էական տարբերություններն ու շահերի բախումները՝ վերծվելով լուրջ հակասությունների: Համաշխարհային քաղաքականության նշված ուժային կենտրոնների հետ Թուրքիան ներկայումս ունի բավական բարդ ու լարված հարաբերություններ, և բարենպաստ պայմաններ են ստեղծվել, որ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ այդ պետության խորացող հակասություններն օգտագործվեն նրա դեմ՝ հանգեցնելով ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման գործընթացի մեկնարկին: Գաղտնիք չէ, որ նշված ուժային կենտրոնները Թուրքիայի հետ հարաբերություններում իրենց նպատակներին հասնելու համար շահարկում են նաև Հայոց ցեղասպանության հարցը: Տվյալ պայմաններում Հայաստանը և Սփյուռքը պետք է ճիշտ գնահատեն իրավիճակն ու բաց չթողնեն պահի ընձեռած հնարավորությունները, փորձեն հաշվենկատ ու շրջահայաց քայլերով Թուրքիայի վրա աստիճանաբար ավելացող համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների ճնշումն ուղղորդել դեպի ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնումը:

Երկրորդ ենթագլուխ – Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա Թուրքիայի ներքաղաքական զարգացումների ազդեցությունը:

Թուրքական իշխանությունների կողմից պաշտոնապես իրականացվող Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը պայմանավորված է ոչ միայն հանցագործության զոհ դարձած հայ ժողովրդին հասցված նյութական, տարածքային և բարոյական կորուստների հատուցման պարտավորությունից խուսափելու հանգամանքով, այլև՝ տասնամյակներ շարունակ ժխտողականության հիմքի վրա ձևավորված թուրքական ազգային ինքնության հնարավոր խաթարման վախով:

Թուրքական պաշտոնական քարոզչությունը ջանք ու եռանդ չի խնայում, որ հիմնավորի, թե Թուրքիային հաջողվել է հաղթահարել ներքաղաքական նախկին խնդիրները, սակայն դրանք ոչ միայն չեն լուծվել, այլ տասնամյակների ընթացքում երկրի իշխանությունների ձեռնարկած մակերեսային ու ոչ հետևողական քայլերի պատճառով ավելի են բարդացել՝ երկրի համար վերածվելով լուրջ սպառնալիքների: Աշխարհիկության և իսլամի միջև գաղափարական առճակատումը, բանակ - քաղաքական իշխանություն և հասարակություն դիմակայությունը[89], անդրկուլիսյան ուժերի՝ «խորքային պետությանե, «գյուլենական շարժ-

---

[88] Տես Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, No. 1, p. 79.

[89] Տես Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Եր. 2008:

ման»[90] և ծայրահեղ ազգայնականների՝ Գորշ գայլերի[91] անընդհատ միջամտությունները քաղաքական կյանքին, ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքների հետևողական խախտումները[92], Քրդական հարցը լուծելու անկարողությունը[93], «ինքնության ճգնաժամը»[94] և դրանից բխող «սկրոֆոբիան»[95] շարունակում են մնալ ներկայիս Թուրքիայի քաղաքական համակարգի չլուծված հիմնական խնդիրներն ու մարտահրավերները:

Թուրքիայի քաղաքական համակարգի խնդիրների և մարտահրավերները, ինչպես նաև ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցերը քննարկվում են Հայոց ցեղասպանության հարցի լույսի ներքո՝ պարզելու համար, թե Թուրքիայում ընթացող ներքաղաքական զարգացումներն ինչպես են ազդում և ինչպես կարող են անդրադառնալ հայ ժողովրդի օրինական իրավունքների վերականգնման, այն է՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի վրա:

Եզրակացությունների մեջ ի մի են բերված աշխատության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները.

1. Օսմանյան կայսրության խորհրդարանում 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քննարկումների ու կայացրած որոշումների, ինչպես նաև թուրքական ռազմական տրիբունալներում դրան հաջորդած երիտթուրքերի դատավարության քննության արդյունքում եզրակացվում է, որ Օսմանյան կայսրության օրենսդիր ու դատական մարմինների կողմից անուղղակիորեն ճանաչվել է Հայոց ցեղասպանության փաստը: Ուստի, Թուրքիան ոչ թե պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը, այլ որպես Օսմանյան կայսրության միջազգային ինքնության շարունակող՝ վերահաստատի հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության նախկին ճանաչումները:

2. Անհրաժեշտ է շարունակել աշխատանքները Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչած ու դատապարտած երկրներում՝ այն իմաստով, որ ռացիոնալացվեն նրանց կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները: Հարկավոր է հասնել նրան, որ խորհրդարանների կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները վերածվեն օրենքների և, այդպիսով, պարտադիր դառնան տվյալ երկրների համար: Բացի այդ, պետք է շարունակել աշխատանքները Հայոց ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող օրենքների ընդունման ուղղությամբ: Եվրոպական որոշ երկրների կողմից

---

[90] Տե՛ս Շաքարյան Ա., Արարատից այն կողմ. Ապակոդավորելով Թուրքիան, Եր., 2011:

[91] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», Եր., 2013; Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Եր., 2007:

[92] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009; Ալվոցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014:

[93] Տե՛ս Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008; Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Եր., 2016:

[94] Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Եր., 2009, էջ 20-21:

[95] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:

Հայոց ցեղասպանության ժխտումը օրենսդրորեն քրեականացնելու նախադեպերը եվրոպական մյուս երկրների հայկական համայնքները պետք է աշխատեն տարածել նաև իրենց երկրների վրա:

3. Տարբեր երկրների հայկական համայնքները, լոբբիստական կառույցներն իրենց աշխատանքների թիրախ խորհրդարաններից բացի պետք է դարձնեն նաև պետությունների գործադիր մարմինները, քաղաքական որոշումները նախապատրաստող փորձագիտական կառույցներն ու «ուղեղային կենտրոնները»: Հարկավոր է հասնել նրան, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրներն իրենց քաղաքականությամբ սատարեն Հայաստանին, երբ հասունանա Հայոց ցեղասպանության հայցը միջազգային դատարան ներկայացնելու պահը:

4. Հայոց ցեղասպանության իրագործմամբ թուրքական պետությունը տիրացավ այդ հանցագործության զոհ դարձած ժողովրդի ոչ միայն հայրենիքի մեծ մասին՝ Արևմտյան Հայաստանին, այլև նրա մշակութային ժառանգությանն ու նյութական ամբողջ ունեցվածքին: Այսօր էլ աշխարհում կան Թուրքիայի նման երկրներ, օրինակ՝ նրա կրտսեր դաշնակից Ադրբեջանը, որոնք ցեղասպան քաղաքականության միջոցով են փորձում լուծել ազգային հարցերն ու բռնությամբ պահպանել իրենց գերիշխանությունը այլ ազգերի նկատմամբ: Նման երկրների կողքին կան նաև ազդեցիկ, հզոր պետություններ, որոնք ոչ միայն չեն կանխում կամ դատապարտում ցեղասպանություն իրականացնող վարչակարգերի հանցավոր գործողությունները, այլ, փորձելով տարածել իրենց ազդեցությունը կոնկրետ տարածաշրջաններում և տիրանալ զոհ ժողովրդի տարածքում եղած բնական պաշարներին, օժանդակում են հանցավոր վարչակարգերին, զբաղվում զենքի վաճառքով և խոշոր գումարներ վաստակում զոհ ժողովուրդների ողբերգությունների վրա: Սրանց կողքին, սակայն, կան նաև պետություններ, որոնք չեն ցանկանում իրենց վրա զգալ ցեղասպանության հանցագործության հետևանքները՝ գաղթականների հոսքերը և դրա հետ կապված համաճարակների տարածումը, սոցիալական խնդիրների առաջացումը և այլն: Նրանք պատրաստ են ոչ միայն դատապարտել այդ հանցագործությունը, այլև միջոցներ ձեռնարկել այն կանխարգելելու ուղղությամբ: Դառը ճշմարտություն է, որ ցեղասպանության հանցագործության նկատմամբ պետությունների դիրքորոշումները պայմանավորված են ոչ թե մարդասիրական մղումներով կամ միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով, այլ նրանց շահերով:

5. Ցեղասպանության հանցագործության զոհ դարձած հայ ժողովուրդը և նրա շահերի ու իրավունքների արտահայտիչ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման գործում պետք է առաջնորդվեն այն մոտեցմամբ, որ համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոններին՝ ԱՄՆ-ին, ԵՄ-ին ու Ռուսաստանին կարողանան մատնանշել այդ գործընթացից նրանց ստանալիք շահը, ինչից հետո նրանք գուցեև կսատարեն հայ ժողովրդին ու Հայաստանին այդ պայքարում: Իսկ նրանց շահը տվյալ դեպքում կարող է համարվել Թուրքիային ավելի թուլացած, ինչու չէ, նաև՝ տրոհված տեսնելը, ինչով վերջնականապես կզսպվեն վերջինիս տարածաշրջանային հեգեմոն և նույնիսկ համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատար դառնալու հավակնությունները, ինչը միանշանակ հակասում է նշված ուժային կենտրոնների շահերին:

6. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների ու Սփյուռքի լոբբիստական կառույցների ներդաշնակ ու համաձայնեցված աշխատանքի դեպքում հնարավոր կլինի այդ ուժային կենտրոններում Հայոց ցեղասպանության հիմնահարցում ձևավորել այնպիսի մտայնություն, որ նրանք, եթե նույնիսկ հենց իրենք այդ հարցով անմիջական ճնշում չգործադրեն Թուրքիայի վրա, ապա սատարեն Հայաստանի ջանքերին, երբ վերջինս պատրաստ կլինի միջազգային դատական ատյանում իրավական գործընթաց նախաձեռնել Թուրքիայի դեմ՝ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով:

7. Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերահաստատման նպատակով, անշուշտ, հարկավոր է խոսել թուրքերի հետ, նրանց իրազեկել ցեղասպանության ընթացքում մեր ժողովրդի կրած տառապանքների ու կորուստների մասին, ներկայացնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում թուրքական կողմից մեր ակնկալիքները, ինչպես նաև հայերի և թուրքերի ներկա ու ապագա հարաբերությունների կարգավորման մեր մոտեցումները: Թուրք հասարակության մեջ այս խնդիրները վերջին տասնամյակների ընթացքում արդեն բարձրաձայնվում է Թուրքիայի հայերի՝ ինչպես պոլսահայության, այնպես էլ ծպտյալ հայերի ներկայացուցիչների կողմից: Չափազանց կարևոր պետք է համարել, որ այդ գործն արդեն սկսվել է հենց թուրքահայերի կողմից, սակայն նրանք չպետք է միայնակ մնան իրենց ձեռնարկումներում, այլ պետք է ստանան ամբողջ հայության աջակցությունը: Նշված հարցերի շուրջ թուրքերի հետ երկխոսություն սկսելուց առաջ նախ հարկավոր է ընտրել ճիշտ զրուցակցի՝ ավելի առաջադեմ հայացքներ ունեցող մտավորականների, որոնք չեն ուղղորդվում թուրքական իշխանությունների կամ ծայրահեղ ազգայնական ուժերի կողմից, հակառակ պարագայում ձեռնարկված ջանքերը կլինեն ապարդյուն, անտեղի կվատնվեն ռեսուրսներն ու ժամանակը: Թուրքական հասարակության մեջ նշված հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու համար համապատասխան թիրախային խմբերի ընտրության, ինչպես նաև նրանց հետ տարվելիք աշխատանքի կազմակերպման հարցում խելամիտ կլինի ապավինել պոլսահայերի և ծպտյալ հայերի միջնորդությանը:

8. Թուրքիայի ներքաղաքական խնդիրների ողջ ներկապնակի լույսի ներքո Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցի դիտարկման պարագայում պարզ է դառնում այդ հիմնահարցի ակնհայտ բախումը ոչ միայն թուրքական պետության շահերի, այլև քրդական գործոնի հետ: Անհնար է անտեսել այն իրողությունը, որ անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչող քրդական շարժման առաջնորդները Արևմտյան Հայաստանը դիտարկում են՝ իբրև մի տարածք, որտեղ պետք է ձևավորվի Քուրդիստան պետական կազմավորումը, իսկ հայերը և այլ քրիստոնյաները լավագույն դեպքում այնտեղ կարող են բնակվել քրդական գերակշիռ զանգվածի հետ համակեցության սկզբունքով: Առկա իրողություններից ելնելով՝ թուրքական իշխանությունների դեմ պայքարի հայ-քրդական հնարավոր համագործակցության խնդիրը կարող է քննարկվել միայն Քրդական հարցում հայկական կողմի մշակած հստակ ռազմավարության առկայության պայմաններում: Ռազմավարության մշակումից հետո հնարավոր է քրդական շարժման ղեկավարների հետ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ նրանց ներկայացնել հայկական կողմի այն սկզբունքային մոտեցումները, որոնց շուրջ համաձայնություն ձեռք բերելուց

հետո միայն կարելի է քննարկել համագործակցության խնդիրները: Մասնավորապես, քուրդ գործիչների հետ ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ հայկական կողմի համար ելակետային պետք է լինեն Հայոց ցեղասպանության իրականացման և հայերի ունեզրկման գործում քրդերի՝ հանցակից լինելու դրույթի անվերապահ ընդունումը, իսկ հնարավոր համագործակցության հեռանկարները պետք է պայմանավորվեն Արևմտյան Հայաստանի և ինքնավար Քուրդիստանի սահմանների հստակեցման հարցերում Սևրի պայմանագրի 62-64-րդ հոդվածների դրույթները քուրդ գործիչների կողմից ընդունելու հանգամանքով: Սևրի պայմանագրի նշված հոդվածներով քրդական ինքնավարության կազմում ներառվելու էին Եփրատից հարավ ընկած Դիարբեքիրի նահանգի և Բիթլիսի և Վանի նահանգների Հայաստանի կազմի մեջ չմտնող հատվածները, ինչպես նաև Մոսուլի նահանգը:

9. Քրդական շարժման ղեկավարների հետ քննարկումներ նախաձեռնելիս անպայման պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունները ներկայումս ակտիվորեն շահարկում են ծպտյալ հայերի հարցը, փորձում են այն հակադրել Քրդական հարցին՝ նպատակ հետապնդելով լարում մտցնել քրդերի և ծպտյալ հայերի հարաբերություններում, քրդերին մղել Թուրքիայի արևելյան նահանգներում հայերին ընկալելու՝ որպես մրցակից տարրի՝ դրանից բխող վտանգավոր հետևանքներով: Հայկական ներկայության վերազարթոնքի փորձերը դեռևս դրական են գնահատվում և, երբեմն, նաև քաջալերվում են քրդական միջավայրում, ուստի և մեր քայլերը որևէ կերպ չպետք է խաթարեն ներկա դրությունը: Սա նշանակում է, որ մենք պետք է արագացնենք արդեն սկսված աշխատանքները նաև ծպտյալ հայության խնդիրների լուծման ռազմավարության մշակման ուղղությամբ, քանզի, եթե ծպտյալ հայությունն իր գործունեությունը շարունակի հայությունից ու հայկական պետությունից կտրված, տարերային ձևով, ապա այն կարող է ծառայեցվել տարբեր համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի շահերի սպասարկմանը և, ի վերջո, մարել: Ռազմավարության մեջ առաջնահերթ տեղ պետք է հատկացվի ծպտյալ հայերի անվտանգության հարցին և պետք է առաջարկվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան վերազարթոնքի փուլում գտնվող բռնի իսլամացված մեր հայրենակիցների ներուժը, առանց նրանց վնասելու, վերածել գիտակցված ազգային շարժման:

10. Ի տարբերություն քրդերի, շատ ավելի դյուրին է համագործակցության եզրեր գտնել Թուրքիայում իրենց թվաքանակով թուրքերից և քրդերից հետո երրորդ խումբը հանդիսացող ալևիական համայնքի առաջնորդների հետ, քանզի ալևիների հետ միևնույն տարածքի նկատմամբ՝ իբրև հայրենիքի, մենք հավակնություններ չունենք: Ալևիները կարող են բնական դաշնակիցներ համարվել նաև ծպտյալ հայերի համար, քանզի նրանց միջև պատմականորեն ձևավորվել են բարեկամական հարաբերություններ, իսկ նախորդ պատմափուլերում կուտակվել է գոյատևման համատեղ պայքարի փորձ, մասնավորապես՝ Դերսիմում: Բացի այդ, ի տարբերություն քրդերի, ալևիների ու ծպտյալ հայերի միջև նկատելի են որոշակի ընդհանրություններ, երկու խմբերն էլ Թուրքիայում ստիպված են եղել ծպտյալ մնալ և թաքցնել իրենց ինքնությունը: Ծպտյալ հայերի իրավունքները պաշտպանելու և նրանց օգնություն ցուցաբերելու հարցում մեզ համար լիովին կարող է ընդօրինակելի լինել ալևիների եվրոպական կառույցների գործունեության փորձը: Ալևիների հետ համագործակցությունը, սակայն, պետք է իրականացվի չափազանց զգուշությամբ՝ որևէ կերպ չգրգռե-

լով քրդերի խանդը և չմոռանալով, որ ալևիների մեջ որոշակի տեղ ու դեր ունեն նաև քուրդ ալևիները:

11. Պոլսի Հայոց պատրիարքարանը հնարավորինս պետք է դյուրին դարձնի բռնի իսլամացված հայության կրոնադարձության գործընթացը՝ վերացնելով գոյություն ունեցող արհեստական դժվարություններն ու խոչընդոտները, իսկ պոլսահայ համայնքը պետք է սերտորեն համագործակցի իսլամացված հայերի հայրենակցական միությունների հետ՝ հնարավորինս հեշտացնելով պաշտոնական հայկական համայնքում նրանց ինտեգրումը: Ցեղասպանության, բռնի մահմեդականացման, ինչպես նաև միսիոներական գործունեության հետևանքով իրարից տարանջատված հայության Թուրքիայում բնակվող հատվածները պետք է մի կողմ դնեն իրենց միմյանցից հեռացնող կրոնական տարբերությունները և առաջնորդվեն ազգային միասնականության սկզբունքով, որպեսզի կարողանան դիմակայել թուրքական իշխանությունների կողմից իրենց նկատմամբ ներկայումս էլ իրականացվող խտրական քաղաքականությանը:

12. Պոլսի Հայոց պատրիարքարանը պետք է նաև սերտացնի համագործակցությունը Լոզանի պայմանագրով պաշտոնապես ճանաչված, ինչպես նաև չճանաչված Թուրքիայում բնակվող ոչ մահմեդական փոքրամասնությունների հոգևոր առաջնորդարանների հետ: Ոչ մահմեդական համայնքների հոգևոր առաջնորդները պետք է գիտակցեն, որ, առանց անառողջ մրցակցության ու մեկը մյուսի հաշվին թուրքական իշխանություններին հաճոյանալու դրսևորումների, միասնաբար ավելի արդյունավետ կարող են պայքարել Թուրքիայի ներսում իրենց համայնքների իրավունքների պաշտպանության և եկեղեցիների ու կալվածքների նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման համար: Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների առաջնորդների ձայնն ավելի լսելի կդառնա այն դեպքում, եթե նրանք միջազգային հանրությունից միասնաբար պահանջեն ճնշում գործադրել թուրքական պետության վրա՝ հարկադրելով նրան կատարել միջազգային համաձայնագրերով ստանձնած ոչ թուրքական մշակութային ժառանգության պահպանման ու պաշտպանության պարտավորությունները:

Ատենախոսության հավելվածում ներկայացված են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման նպատակով իրավական ու քաղաքական ուղղություններով տարվելիք աշխատանքների վերաբերյալ հետևյալ առաջարկները.

1. Հայաստանի և Սփյուռքի համապատասխան կառույցներն ու մասնագետների միասնական ջանքերով պետք է մշակեն «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար Թուրքիային ներկայացվելիք պահանջների պատմահրավական փաթեթ-փաստաթուղթը» (այսուհետ՝ «Պահանջների փաթեթ»), որում հիմնախնդիրը ճիշտ ձևակերպելուց զատ պետք է հստակ պատասխաններ տրվեն այն հարցերին, թե ի՞նչ ենք հասկանում Հայոց ցեղասպանության հետևանքներ ասելով և ինչպե՞ս կամ ի՞նչ չափով ենք պատկերացնում դրանց հաղթահարումը կամ՝ մասնակի վերացումը, քանզի կան հետևանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են: Հայոց ցեղասպանության կորուստներն ու հետևանքները հստակեցնելուց հետո տվյալ փաստաթղթում պետք է իրավական տեսակետից հիմնավորվեն ցեղասպանության հետևանքները հաղթահարելու առումով Թուրքիային ներկայացվելիք պահանջները:

«Պահանջների փաթեթի» Հայաստանի և Սփյուռքի կողմից միասնաբար մշակելու հանգամանքը կարևոր է այնքանով, որ ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կձևավորվի միասնական համազգային մոտեցում, որից այլևս չի կարող լինել որևէ շեղում: Այդպիսով կբացառվեն Հայոց ցեղասպանության հետևանքների և ներկայացվելիք պահանջների հետ կապված տարաբնույթ մեկնաբանություններն ու շահարկումները՝ տարբեր կառույցների և առանձին անհատների կողմից: Հարկավոր է քաջ գիտակցել, որ այս հարցում ցանկացած ինքնագործունեություն կամ մոտեցումների տարբերություններ անպայման օգտագործվելու են մեր դեմ՝ նպատակ հետապնդելով տարաձայնություններ մտցնել հայ ժողովրդի հատվածների միջև և շեղել ճիշտ ճանապարհից: Կարծում ենք, որ Հայաստանը «Պահանջների փաթեթին» պետք է օրենքի կարգավիճակ, որպեսզի քաղաքական իրավիճակի փոփոխությունից անկախ, երկրի արտաքին քաղաքականության մեջ այս ուղեծրից ոչ մի շեղում չկատարվի: Այս քայլի նպատակը պետք է լինի այն, որ պաշտոնապես արգելվի որևէ գործողություն կամ անգործություն, որը շեղում կլինի ընդունված ուղեգծից:

Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ **հայրենազրկման** հաղթահարման պահանջն ավելի խելամիտ ու իրատեսական է ամփոփել այն սահմաններով, որոնք ամրագրված են 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով*, ինչը ոչ միայն չի հակասում, այլև համապատասխանում է ցեղասպանության իրականացման պահին գործող միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային հակամարտությունների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի դրույթներին, որոնց համաձայն կողմերի միջև վեճի կարգավորման եղանակ էր դիտվում նաև միջազգային իրավարարությունը: Ուստի՝ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռն իրավացիորեն կարելի է համարել իբրև քաղաքական պատասխանատվություն՝ հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության համար:

Մշակութային ժառանգության նկատմամբ վանդալիզմի դրսևորումը որպես ցեղասպանական գործողություն ներկայացված է եղել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծում, սակայն որոշ երկրների հակազդեցության հետևանքով այն դուրս մղվեց փաստաթղթի վերջնական տեքստից: Նման դրույթի ընդունումով կարելի էր պատասխանատվության կանչել մշակութային արժեքները ոչնչացնողներին: Սակայն վերջինիս բացակայությունը չի նշանակում, որ նույն նպատակին չի կարելի հասնել այլ փաստաթղթերի միջոցով: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության արդյունքում մշակութային ժառանգության կորուստների վերականգնման պահանջը կարող է հիմնավորվել 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 37–44 հոդվածներով: Մասնավորապես պայմանագրի 42 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվել

* Խոսքը չի վերաբերում 1878–1918–1920 թթ. սկզբում՝ Ռուսաստանյան կայսրության, իսկ հետո էլ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը կազմող՝ Կարսի մարզին, Բաթումի մարզի հարավային հատվածին և Սուրմալուի գավառին, որոնք միացվել են Թուրքիային՝ Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերով:

է լիակատար պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնությունների այլ կրոնական հաստատությունները: «Լիակատար պահպանության» տակ պետք է հասկանալ ոչ միայն եկեղեցիները չքանդելն ու չավերելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը: 1969 թ. հունվարի 7-ին Թուրքիան ստորագրել է մշակութային հուշարձանների պաշտպանության վերաբերյալ միջազգային պայմանագիր, որը հստակ երաշխիքներ է տալիս փոքրամասնությունների մշակութային հուշարձանների խնամքի և պաշտպանության վերաբերյալ: Բացի նշվածից, Թուրքիայում առկա հայկական մշակութային ժառանգության հարցը կարող է պաշտպանվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության դրույթներով, քանի որ թե՛ Հայաստանը և թե՛ Թուրքիան այդ կազմակերպության անդամ-երկրներ են:

Ինչպես նշվել է, Հայոց ցեղասպանության **նյութական կորուստներն** ու դրանց հետևանքները հստակեցման կարիք ունեն: Փարիզի վեհաժողովին կից ստեղծվել էր «Փոխհատուցումների հանձնաժողով», որը զբաղվում էր պարտված երկրների կողմից հաղթողներին տրվելիք ռազմատուգանքների չափերի հստակեցումով: 1919 թ. մարտի 7-ին հանձնաժողովին կից ստեղծվում է «Հատուկ հանձնախումբ», որն էլ մարտի 8-ին դիմում է մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին, պատերազմի ընթացքում կրած նյութական վնասների հաշվարկ ներկայացնելու հարցով: Հանձնախումբը ներկայացված հաշվարկներն ամփոփեց 1919 թ. ապրիլի 14-ին: Այսինքն՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունների կողմից պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած նյութական կորուստների մասին հուշագիրը Փարիզի վեհաժողովի Փոխհատուցումների հանձնաժողովին ներկայացնելու համար ունեցել են ոչ ավել քան մեկ ամիս ժամանակ, որի ընթացքում ուղղակի անհնար էր ամբողջական տվյալներ հավաքել ու համակողմանիորեն դրանք համակարգել:

Հուշագիրը կազմողները՝ Փափազյանը և Թերզիբաշյանը, կատարել էին միայն Արևմտյան Հայաստանի նահանգների 1 մլն. 800 հազար հայության կրած նյութական կորուստների հաշվարկը: Կիլիկիայի և Օսմանյան կայսրության արևմտյան նահանգների հայության ունեցած կորուստների հաշվարկ նրանց կողմից չի կատարվել այն հիմնավորմամբ, թե իբր այդ տարածքների մոտ 226 000 հայ բնակչությունը չի ենթարկվել տեղահանության[96]: Հուշագրի կազմողների նման մոտեցումը պարզապես տարակուսանք է առաջացնում, քանզի քաջ հայտնի է, որ թուրքական իշխանությունները ցեղասպանության քաղաքականությունը և դրան զուգահեռ ընթացող հայերի զանգվածային ունեզրկման գործընթացն իրականացրել են ոչ միայն Արևմտյան Հայաստանի նահանգներում, այլ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում: Այս փաստերն արդեն իսկ վկայում են Փարիզի վեհաժողովին հայկական պատվիրակության ներկայացրած հուշագրի մեկնարկային տվյալների անլիարժեքության մասին:

Մեկնարկային թվերի անճշտություններից զատ հուշագրի նախագծում թույլ են տրվել նաև մեթոդաբանական բնույթի սխալներ, հանիրավի նվազեցնելով նույնիսկ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կրած նյութական վնասների ծավալները: Օրինակ, գավառաբնակ հայերի բերքի կորուստը հաշվարկվել է միայն 1914 թ. համար, մինչդեռ այդ նույն կորուստը հայ գյուղացիները շարունակել են կրել նաև հաջորդ տարիներին՝ ընդուպ մինչև հուշագրի ներկայացման տարեթիվը՝ 1919 թ., ինչը նշանակում է, որ մեկ տարվա բերքի կորստի չափը

[96] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, Եր., 1999, էջ 6:

պետք է հնգապատկվեր: Նույնը կարելի է ասել նաև անասունների գլխաքանակի կորստի վերաբերյալ, քանզի հաշվարկվել էր միայն տվյալ պահին կորցված անասունների գլխաքանակի կորուստը, անտեսելով 1914-1919 թթ. դրանց թվի բնական ավելացման հանգամանքը[97]: Արդյունքում գավառաբնակ հայ ընտանիքներից յուրաքանչյուրի կրած կորուստը հաշվարկվել էր 17 043 ֆրանկ, այսինքն՝ ընդամենը 4 մլրդ. 601 մլն. 610 հազար ֆրանկ[98]:

Քաղաքաբնակ հայ ազգաբնակչության կորուստների հաշվարկներում էլ չեն հաշվարկվել տներից, վաճառատներից, հյուրանոցներից, գործարաններից, արհեստանոցներից ու խանութներից ստացվելիք հինգ տարիների վարձը կամ եկամուտը, պարենի կորուստն էլ հինգ տարվա փոխարեն հաշվարկվել է վեց ամսվա կտրվածքով: Արդյունքում քաղաքաբնակ հայ ընտանիքներից յուրաքանչյուրի կրած կորուստը հաշվարկվել է 35 950 ֆրանկ, այսինքն՝ ընդամենը 3 մլրդ 235 մլն. 500 հազար ֆրանկ[99]:

Հուշագրում մարդկային կորուստների հատուցման առանձին հաշվարկ է կատարվել և պահանջվել է հատուցել մեկ միլիոն սպանվածների ժառանգներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ ազգին, ինչպես նաև ցեղասպանությունը վերապրողներին՝ 50 հազար հաշմանդամներին, վիրավորներին և անբուժելի հիվանդներին, բռնագաղթը վերապրած և արտասահմանում ապաստանած աշխատանքից և սեփականությունից զրկված 800 000 անձանց կամ 160 000 ընտանիքներին և 346 350 գաղթականների ժառանգներին: Այս խմբերին տրամադրվելիք հատուցման գումարը հաշվարկվել է 6 236 350 000 ֆրանկ[100]: Նախ նշենք, որ արևմտահայության մարդկային կորուստների և վերապրածների թվերի հաշվարկները չեն կարող ստույգ և վերջնական համարվել ինչպես կարճ ժամանակահատվածում դրա վերաբերյալ ամբողջական տեղեկություն հավաքելու անհնարինության, այնպես էլ հուշագրի ներկայացման պահին ցեղասպանության հանցագործության շարունակության պատճառով: Բացի այդ, փաստաթղթում չի պարզաբանվում, թե մարդկային կորստի դիմաց կամ վերապրողի համար հատուցման չափը ինչ սկզբունքով կամ մեթոդով է որոշվել:

Հուշագրի կազմողներն անհասկանալիորեն մարդկային կորուստների բաժնում են ներկայացրել նաև ազգային կառույցների՝ 83 առաջնորդարանների, 1860 եկեղեցիների և մատուռների, 229 վանքերի, 26 վարժարանների և դպրևանքերի, 1439 դպրոցների, 42 որբանոցների ամբողջական կամ մասնակի ավերման ու դրանց գույքի, ձեռագիր մագաղաթների և այլ արժեքների բռնագրավման, ինչպես նաև այլ շինությունների՝ պատմագեղարվեստական հուշարձանների, ջրաղացների, աղբյուրների ու ջրհորների ավերման, վնասների հաշվարկը: Այս բաժնում էր ընդգրկված կաշառակերության և բռնագրավման հետևանքով հայերի կրած վնասների, ինչպես նաև արտասահմանում ապաստանած հայ գաղթականներին սպասարկող հիվանդանոցների, որբանոցների և առողջապահական այլ հաստատությունների պահպանման և մատակարարման համար գումարի պահանջի հաշվարկները: Այս բնույթի վնասներների համար ընդհանուր առմամբ պահանջվում էր 525 մլն. ֆրանկ, ընդ որում, ազգային կառույցների ոչնչացման ու դրանց գույքի բռնագրավման համար՝ ընդամենը 75

---

[97] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, էջ 315:
[98] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 8:
[99] Նույն տեղում:
[100] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 9:

մլն. ֆրանկ[101]: Այս կորուստները կապ չունեն մարդկային կորուստների հետ և պետք է ներկայացվեին առանձին բաժնով, բացի այդ էլ, մարդկային կորուստների հաշվարկների և հատուցման չափերի վերաբերյալ արված մեթոդաբանական դիտարկումները վերաբերում է նաև այս կորուստներին:

Բացի այդ, հուշագրում ներկայացված են ամբողջությամբ կամ մասնակի ավերված ազգային կառույցների ոչ ամբողջական տվյալները: Դրանք հարկավոր է ճշգրտել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. անտիպ նյութերի հիման վրա հետագայում կատարված ուսումնասիրությունների տվյալներով, որոնց համաձայն հաշվարկվում է 2538 եկեղեցի, 451 վանք և 1996 դպրոց[102]: Ինչպես նկատելի է, եկեղեցիների, վանքերի ու դպրոցների այս թվերը զգալիորեն տարբերվում են 1919 թ. հայկական հուշագրում ներկայացվածներից և վերահաշվարկ են պահանջում: Հուշագրի կազմողները արևմտահայության ազգային առաջնորդարանների, եկեղեցիների, մատուռների, վանքերի, վարժարանների, դպրեվանքերի և որբանոցների բռնագրավված ունեցվածքի՝ կալվածքներ, շարժական գույքի, ձեռագիր մագաղաթների և այլ արժեքների կորստի առանձին հաշվարկ չեն կատարել, դա ներկայացնելով այդ կառույցների մասնակի և ամբողջական ավերման վնասի հետ մեկտեղ, մինչդեռ այդ կորուստներն այնքան հսկայական են, որ առանձին հաշվառման կարիք են զգում:

Հուշագիրն ընդհանրապես շրջանցում է Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ նահանգների հայ կաթոլիկ և բողոքական համայնքների կրած նյութական կորուստները: Օրինակի համար՝ կայսրությունում հայ բողոքականներն ունեին 310 ժողովարան, որոնց բացարձակ մեծամասնությունը հիմնահատակ կործանվել է: Փաստաթղթում չեն հաշվառվել նաև այն նյութական վնասները, որոնք թուրք-ադրբեջանական զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918 թ. և բնականաբար չէին կարող նաև հաշվառվել փաստաթուղթը ներկայացնելուց հետո արդեն քեմալականների կողմից 1920 թ. արևելահայությանը, 1921 թ. կիլիկիահայությանը և 1922 թ. Զմյուռնիայի հայությանը հասցված նյութական վնասները: Ուստի՝ որոշ հեղինակների կարծիքով, ցեղասպանության շարունակության քաղաքականության արդյունքում հայերին հասցված նյութական վնասի նշված թիվը պետք է ավելանա առնվազն 20%-ի չափով[103]:

Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե ինչ նյութական օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կատվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ: Այսպես՝ եթե 1913–1914 թթ. այն կազմում էր 35 մլն. օսմ. ոսկի, ապա 1915–1916 թթ. 38 մլն., իսկ 1917–1918 թթ.՝ 85 մլն[104]: Ակնհայտ է, որ տվյալ պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման

---

[101] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, էջ 316:

[102] Տե՛ս Kévorkian R., Pamboujian P., Arméniens dans l'Empire ottoman à la vielle du génocide, Paris, 1992.

[103] Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18–19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 180:

[104] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915–1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ», Եր., 2010, թիվ 3 (31), հավելված, էջ XXIX:

հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը փաստորեն օգտվում էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

Միջազգային իրավունքն, անշուշտ, նախատեսում է նյութական վնասների հատուցման ձևեր և մեխանիզմներ: Հատուցման համընդգրկուն ձևն, ինչպես հայտնի է, փոխհատուցումն է, սակայն կա նաև ռեստիտուցիայի ինստիտուտը, որը ենթադրում է նյութական արժեքների կամ նախկին իրավական վիճակի վերականգնումը, այդ թվում՝ բնեղենով: Ռեստորացիան նախատեսում է, որ պետք է վերականգնվեն այն բոլոր իրավունքները, որով օժտված են եղել հանցագործության զոհ-խմբի անդամները՝ մինչև դրա կատարումը: Այսինքն՝ միջազգային իրավունքը նախատեսում է ոչ միայն Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասի հատուցում, այլև նրանց իրավունքների վերականգնում այն գույքի և ունեցվածքի նկատմամբ, որը հանիրավի բռնազավթվել է տվյալ հանցագործության իրագործմամբ:

Հայոց ցեղասպանության **հոգեբանական կամ բարոյական հետևանքների** վերականգնման տեսակետից միջազգային իրավունքում կիրառելի է սատիսֆակցիան, որը կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ որևէ այլ պատշաճ ձևերով: Այս առումով սատիսֆակցիայի կարևոր դրսևորում կարող է համարվել նախևառաջ՝ Թուրքիայի կողմից պետականորեն վարվող Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությանունից հրաժարումը:

2. «Պահանջների փաթեթի» հիման վրա՝ Սփյուռքի ու Հայաստանի համապատասխան կառույցների ու մասնագետների համատեղ ջանքերով պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթը՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործողությունների ծրագիրը» (այսուհետ՝ «Գործողությունների ծրագիր»), որում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների հաղթահարմանը: «Գործողությունների ծրագրի» կարևորագույն հիմնախնդիրներից մեկը պետք է դառնա Հայաստանի և Սփյուռքի միջև կատարվելիք աշխատանքների բաժանումը, ելնելով նրանց իրավասություններից, կարողություններից ու փորձառությունից: Հայաստանի և հայկական սփյուռքի միջև նման դերաբաշխումը թույլ կտա Հայոց ցեղապանության հետևանքների հաղթահարման գործընթացները համակարգել մեկ կենտրոնից, այսինքն՝ արդյունավետ օգտագործել եղած ռեսուրսները և խուսափել գործողությունների կրկնություններից: «Գործողությունների ծրագրում» պետք է հստակեցվեն նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման նպատակով իրավական ու քաղաքական ուղղություններով զոհգահեռաբար տարվող աշխատանքները:

Իրավական ուղղություն: Հայաստանն իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հիմնվելով թե՛ ՄԱԿ-ի կանոնադրության և թե՛ անմիջականորեն՝ ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների վրա կարող է դիմել միջազգային դատական ատյաններին՝ և՛ իր ու Թուրքիայի միջև առկա վեճը լուծելու, և՛ կոնկրետ հարցերի, օրինակ, կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման, կամ էլ՝ ՄԱԿ-ի կառույցների միջոցով ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով: Սակայն այստեղ ծա-

գում են նաև միջազգային դատական ատյանների՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կամ միջազգային արբիտրաժի իրավասությունների և ընդհանրապես՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում դրանց դիմելու նպատակահարմարությունը պարզելու հարցերը:

Քաղաքական ուղղություն: Գաղտնիք չէ, սակայն, որ միջազգային իրավունքի և հատկապես նրա նորմերի կիրառման վրա որոշակի ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական զարգացումները, տարածաշրջանային գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի ու շահերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող՝ քաղաքական գործընթացով:

Քաղաքական ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է պարունակեն ոչ միայն զուտ քաղաքական, այլև գիտական ու քարոզչական բաղադրիչներ: Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման քաղաքական ուղղությունը կարող է ենթադրել հետևյալ գործողությունները՝

ա.) Պետք է հետևողական աշխատանք տարվի ցեղասպանության հանցագործությունից տուժած ժողովուրդների խախտված իրավունքների վերականգնման պայքարի ընդհանուր ճակատի ձևավորմանը, ինչը զգալիորեն կբարձրացնի տարվող աշխատանքների արդյունավետությունը և հաջողության հասնելու հավանականությունը: Պետք է նշել, որ այս գործընթացի հիմքերն արդեն իսկ դրվել են Օսմանյան կայսրության և նրա միջազգային ինքնության շարունակող Թուրքիայի Հանրապետության կողմից ցեղասպանության ենթարկված ժողովուրդների՝ հայերի, ասորիների ու հույների սերտ համագործակցության ձևաչափով, որին կարող են միավորվել նորանոր ժողովուրդներ ու երկրներ: Այս առումով կարևոր քայլ պետք է համարել թե՛ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ մարտի 24-ին, ՀՀ Ազգային ժողովն ընդունեց 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում ասորիների և հույների ցեղասպանությունը դատապարտող հայտարարության ընդունումը և թե՛ ապրիլի 15-ին «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը, որով դեկտեմբերի 9-ը՝ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունման օրը, հռչակվեց ցեղասպանությունների դատապարտման և հիշատակման օր: Հայաստանի այս նախաձեռնությունը հասավ իր տրամաբանական ավարտին, երբ սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի 103-րդ լիագումար նիստում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի ներկայացրած բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի, արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր: Հաշվի առնելով ՄԱԿ-ում և տարածաշրջանային միջազգային կազմակերպություններում ունեցած հաջողությունները, Հայաստանը պետք է առավել արդյունավետ դարձնի իր գործունեությունը, փորձելով հասնել այդ կառույցների կողմից Հայոց ցեղասպանության հարցում ավելի գործնական որոշումների ընդունմանը:

բ.) Հայաստանը կարող է, օրինակ, կոչ անել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին՝ խնդրանքով, որ նրանք պահանջեն ու ճնշում գործադրեն Թուրքիայի վրա, որ վերջինս կատարի այդ պայմանագրի 37–44 հոդվածներով իր ստանձնած պարտավորությունները՝ ոչ մահմեդական բնակչության իրա-

վունքները պաշտպանելու հետ կապված: Թուրքիայի հետ Լոզանի պայմանագիրը ստորագրած պետությունները գործնականում կարող են առաջնորդվել այդ պայմանագրի 44-րդ հոդվածի 4-րդ մասով և, Թուրքիայի կողմից իր ոչ մահմեդական հպատակների իրավունքների խախտումը դիտելով այդ երկրի հետ իրենց վեճ, դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան, որն Արդարադատության միջազգային մշտական պալատի լուծարումից հետո համարվում է վերջինիս ժառանգորդ դատական ատյանը: Նման գործընթաց սկսելու համար բավարար է Լոզանի պայմանագիրը ստորագրած պետություններից անգամ մեկի պահանջը, քանզի Թուրքիան, ստորագրելով ու վավերացնելով այդ պայմանագիրը, համաձայնվել է, որ այդ վեճերի քննության արդյունքում միջազգային դատական ատյանի վճիռն իր համար լինելու է վերջնական:

Ամփոփելով նշենք, որ չնայած կատարված հսկայական աշխատանքին, դեռևս բավականին շատ անելիքներ կան: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված աշխատանքները պետք է կատարվեն միասնաբար ու հետևողականորեն՝ ճիշտ օգտագործելով եղած ռեսուրսները ու հաշվենկատորեն օգտվելով ընձեռված միջազգային իրավական ու քաղաքական հնարավորություններից: Անշուշտ, ճանապարհը դյուրին չէ, կան լուրջ խոչընդոտներ ու դժվարություններ, սակայն դրանք հաղթահարելի կլինեն, եթե մեր արդար դատը մինչև վերջ տանելու կամք և վճռականություն ցուցաբերենք: Հարկավոր է գիտակցել, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը ոչ միայն համայն հայության իրավունքների վերականգնման ու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման հարց է, այլ նաև՝ անմեղ զոհերի հիշատակի առաջ մեր սրբազան պարտքն է:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա/ Մենագրություններ

1. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., Եր., 2014, 332 էջ:

2. Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, «Տիր» հրատ., Եր., 2014, 216 էջ:

3. Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., Եր., 2015, 134 էջ:

4. Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, «Տիր» հրատ., Եր., 2015, 220 էջ:

5. Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, «Արտագերս» հրատ., Եր., 2016, 408 էջ:

6.Основания и возможности обращения в Международный суд по делу геноцида армян, изд. “Тир”, Ер., 2014, 107 с.

7.Проблема Геноцида армян в контексте отношений влиятельных акторов мировой политики с Турцией, Изд. “Тир”, Ер.,2015, 94 с.

8.The Basis and Opportunities of Applying to UN International Court on the Case of the Armenian Genocide, “Tir” Publishing House, Yerevan, 2014, 96 pp.

9.The Problem of Armenian Genocide within the Context of Relations between the Influential Actors of World Politics and Turkey, “Tir” Publishing House, Yerevan, 2015, 92 pp.

բ/ Հոդվածներ

1. Հայկական հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում (պատմա-իրավական գնահատական), «Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը» (գիտաժողովի նյութեր), Եր., 2009, N 1, էջ 48-59:

2. Երիտթուրքերի դատավարության պատմա-իրավական հետևանքները Հայոց ցեղասպանության համատեքստում, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2009, N 2, էջ 120-141:

3. Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը. ամփոփում և առաջարկներ, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2010, N 1(29), էջ 11-28:

4. ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական ու միջազգային իրավական նշանակությունը, «Մեծ եղեռն. դատապարտումից հատուցում» գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 83-98:

5. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգային իրավական գնահատականը, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2011, N 2, էջ129-139:

6. ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիան և Հայոց ցեղասպանությունը (վերլուծություն և առաջարկություններ), «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2011, N 4, էջ 152-175:

7. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը. իրավաքաղաքական հիմնավորումների ուրվագիծ, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2012, N 2, էջ 10-34:

8. «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի դասերը. Եվրոպական խորհրդարանի 1987 թ. հունիսի 18-ի որոշման 25-ամյակի առիթով, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2012, N 4, էջ 117-134:

9. Հայաստան-Սփյուռք համագործակցության հիմնախնդիրները Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելու գործընթացում, «Սփյուռքա-

գիտություն» տեսության և պատմության հարցեր, Տարեգիրք, Եր., 2012, N 1, էջ 216-227:

10. Պատմություն և իրավունք. Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ ուղղված Պիեռ Նորայի «փաստարկները», «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2013, N 2, էջ 10-31:

11. Սփյուռքի ջանքերը միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերը ընդունելու գործում, «Սփյուռքագիտություն» Տարեգիրք, Եր., 2013, էջ 29-43:

12. Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2015, N 1, էջ 24-35:

13. Հայոց ցեղասպանության գործով ՄԱԿ-ի միջազգային դատարան ներկայացվելիք հայցադիմումի հիմնական բաղադրիչները, «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. Պատմություն և արդիական խնդիրներ», Երևան, 1-2 հոկտեմբերի 2014 թ. միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2015, էջ 315-326:

14. Ցեղասպանության գործերի քննությունը գերմանական ու իսրայելական դատարաններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2015, N 1, էջ 24-32:

15. Հայոց ցեղասպանություն. ունեզրկումից հատուցում, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2015, N 2, էջ 144-171:

16. Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2016, N 1, էջ 12-28:

17. Ռոդնի Դաքեսյանի «1915 թ. հայերի դեմ իրագործված կոտորածների իրավաբանական հետևանքները և դրանց լուծման դատական ու արտադատական հնարավոր եղանակները» աշխատության գրախոսություն, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2016, N 2, էջ 191-212:

18. Հայոց ցեղասպանության հիմնահարցի արծարծման հնարավորությունները Թուրքիա – համաշխարհային ուժային կենտրոններ հակասությունների համատեքստում, «Հայոց ցեղասպանություն – 100. Ճանաչումից՝ հատուցում», Երևան, 15-16 հոկտեմբերի 2015թ միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2016, էջ 295-305:

19. Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը օսմանյան խորհրդարանում (1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2017, N 1, էջ 13-25:

20. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրը. ճանապարհային քարտեզի ուրվագիծ, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2017, N 2, էջ 171-186:

21. Основные составляющие возможного искового заявления в международный суд по делу геноцида армян, Материалы международной научно-практической конференции, посвященной 100-летию геноцида армянского народа 1915 года: сборник научных статей, Ставрополь-Пятигорск, 17 апреля 2015 г., ООО “Академия”, Ставрополь-Пятигорск, 2015, с. 62-70.

22. Последствия Геноцида армян и возможности их преодоления, Материалы научно-практической конференции “Геноцид армян в Османской империи”, Днепропетровск, 15-16 апреля 2015 г., Днепропетровск, 2015, с. 24-31.

23. Значение совместной декларации держав Антанты от 24 мая 1915 года в вопросе квалификации массового истребления армян и ее воздействие на власти Османской империи, Научно-теоретический журнал “Гуманитарные и юридические исследования”, Выпуск № 3, Ставрополь, 2017, с. 71-75.

24. Политические и правовые возможности преодоления последствий Геноцида армян, Материалы международной научной конференции «Геноцид как духовно-нравственное преступление против человечества» Москва, 23-24 октября 2015 г., изд. «Ключ-С», Москва, 2017, с. 357-364.

МАРУКЯН АРМЕН ЦОЛАКОВИЧ
ИСТОРИЧЕСКИЕ И ПРАВОВЫЕ ОСНОВЫ ПРЕОДОЛЕНИЯ ПОСЛЕДСТВИЙ ГЕНОЦИДА АРМЯН

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 13-ого февраля 2018, в 14°° на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА, по адресу: 0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Армянский народ вот уже несколько десятилетий борется за признание и осуждение Геноцида армян, осуществленного Османской империей в конце XIX – начале XIX веков. Основным результатом этой последовательной борьбы является принятие парламентами различных стран и международными организациями резолюций по признанию и осуждению Геноцида армян.

29 января 2015 года была принята “Всеармянская декларация к 100-летней годовщине Геноцида армян”, которой государственная комиссия по координации мероприятий посвященных 100-летию Геноцида армян совместно с действующими в диаспоре региональными комиссиями, выражая единую волю армянского народа, заявили, что отныне армянский народ будет бороться не только за международное признание и осуждение Геноцида армян, но и за преодоления последствий этого преступления. В документе отмечалось, что с этой целью будет разрабатываться пакет правовых требований, рассматривая его как начало процесса восстановления индивидуальных, общинных и общенациональных прав и законных интересов армянского народа.

Начало процесса преодоления последствий Геноцида армян, то есть востановления попранных прав вследствие геноцида предполагает в первую очередь конкретизацию не только потерь, но и тех последствий этого преступления, которые не остались в прошлом. Уже целый век армянский народ в Армении и в общинах диаспоры несет на себе тяжелый груз последствий чудовищного преступления. Не случайно, что некоторые исследователи придерживаются того мнения, что так как Турция на государственном уровне продолжает политику отрицания Геноцида армян и последствия этого преступления не преодолены, то оно продолжает осуществляться.

Прежде чем предпринимать какие-либо шаги по преодолению последствий Геноцида армян, соответствующим структурам Армении и Армянской диаспоры прежде всего предстоит совместно разработать «Пакет историко-правовых требований, предъявляемых Турции для преодоления последствий Геноцида армян», в котором необходимо определить последствия Геноцида армян, конретизировать объемы возмещения причиненных армянскому народу потерь, а также наметить механизмы преодоления последствий этих потерь. Понесенные армянским народом вследствии Геноцида потери и ущерб можно условно подразделить на следующие группы: а) потеря исторической родины, б) утрата культурно-цивилизационного

наследия, в) уничтожение армянского населения, г) материальный ущерб, д) морально-психологические потрясения.

Для преодоления главного последствия Геноцида армян – лишения армян родины – целесообразно руководствоваться Арбитражным решением президента США Вудро Вильсона о демаркации армяно-турецкой границы от 22 ноября 1920 г., который соответствовал действовавшим тогда международно-правовым нормам.

Требования по восстановлению потерь культурно-цивилизационного наследия армянского народа могут быть обоснованны 37–44 статьями Лозаннского мирного договора от 24 июля 1923 г., относительно защиты прав немусульманского населения, а также положениями устава ЮНЕСКО, странами-членами которой являются Армения и Турция.

Прецедентом для обоснования требований по компенсации материальных потерь Геноцида армян можно считать Люксембургское соглашение от 10 сентября 1952 года, согласно которому Германия начала выплату материальных потерь пострадавшим вследствие Холокоста евреям. В международном праве, конечно, намечены формы и механиозмы возмещения материального ущерба. Реституция предполагает возвращение материальных ценностей или восстановление прежднего правового положения, ресторация определяет, что должны быть восстановлены все те права, которыми были наделены представители группы – жертвы до совершения преступления.

Для преодоления морально-психологичских последствий Геноцида армян в международном праве применима сатисфакция, которая может выражаться в признании совершенного преступления, выражением сожаления, официального извинения или в какой-либо другой форме. В этом смысле важным проявлением сатисфакции прежде всего может рассматриваться отказ Турции от официально проводимой ею политики отрицания Геноцида армян.

На основе “Пакета требований” необходимо разработать также “Программу действий по преодолению последствий Геноцида армян”, в которой должны быть представлены методы и механизмы деятельности Армении и Армянской диаспоры в правовом и политическом направлениях по преодолению последствий Геноцида.

Как субъект международного права, Республика Армения, опираясь на Устав ООН и на положения Конвенции ООН о геноциде, может обратиться в международные судебные инстанции по разрешению спора между Арменией и Турцией, а также по конкретным вопросам, например, толкования применения положений конвенции, или же через органы ООН обратиться к Международному суду ООН с просьбой дать консультативное заключение о правомочности Арбитражного решения президента США Вудро Вильсона о демаркации армяно-турецкой границы.

Не секрет, что на международное право и, особенно на соблюдение его норм, имеют определенное влияние геополитические процессы, протекающие в мире и в конкретных регионах, интересы влиятельных акторов мировой политики и т.д. Именно по этой причине международно-правовые инициативы по преодолению последствий Геноцида армян должны быть тщательно подготовлены с политической стороны. Политические шаги по преодолению последствий Геноцида армян должны как предшествовать, так и вестись параллельно с международно-правовыми действиями.

Необходимо четкое осознание того, что преодоление последствий Геноцида армян – это не только вопрос восстановления прав всего армянства и национальной безопасности РА, это также дань памяти невинным жертвам этого преступления.

MARUKYAN ARMEN TSOLAK
HISTORICAL AND LEGAL BASES OF OVERCOMING CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE

Dissertation for the degree of the Doctor of Science (History)
on the specialization of "History Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on February 13, 2018, 14°° at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The Armenian people fight several decades for recognition and condemnation of the Armenian Genocide carried out at the end of 19th – the beginning of the 20th centuries in the Ottoman Empire. The main result of this consecutive fight is acceptance of various countries by parliaments or international organizations of resolutions concerning the Armenian Genocide.

On January 29, 2015 "Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide" to which The State Commission on the Coordination of Events Dedicated to the 100th Commemoration of the Armenian Genocide, in consultation with its regional committees in the Diaspora, expressing the united will of the Armenian people, said that from now on the Armenian people will fight not only for the international recognition and condemnation of the Armenian Genocide was adopted but also for overcoming consequences of this crime and will preparing to this end a file of legal claims as a point of departure in the process of restoring individual, communal and pan-Armenian rights and legitimate interests.

The process of overcoming consequences of the Genocide of the Armenians that is restoration of the violated rights owing to Genocide assumes first of all a specification not only losses but also those consequences of this crime which did not remain in the past. Already whole century the Armenian people in Armenia and in Diaspora bears on itself heavy freight of consequences of terrible crime. It is not casual that some researchers hold that opinion that as Turkey on a national level continues the policy of the denial of the Armenian Genocide and consequences of this crime are not overcome, it continues to be carried out.

Before taking any steps for overcoming consequences of the Armenian Genocide, the relevant structures of Armenia and Diaspora first of all should prepare "The package of the historical-legal requirements imposed on Turkey for overcoming consequences of the Armenian Genocide" in which it is necessary consequences of the Genocide of the Armenians were thinned, to concretize volumes of compensation of the losses caused to the Armenian people and also to plan mechanisms of overcoming consequences of these losses. The losses suffered by the Armenian people as a result of Genocide and damage can be subdivided into the following groups conditionally: a) loss of the historical homeland, b) loss of cultural and civilization heritage, c) extermination of the Armenian population, d) material damage, e) moral and psychological shocks.

For overcoming the main consequence of the Armenian Genocide – deprivation of Armenians homeland – is expedient to base on the arbitral decision of the U.S. President

Woodrow Wilson on November 22, 1920 who met international legal standards, acting during implementation of the Armenian Genocide.

Requirements of restoration of losses of cultural and civilization heritage of the Armenian people can be proved by 37-44 articles of the Lausanne Peace Treaty of July 24, 1923, concerning protection of the rights of the non-Muslim population and also provisions of the charter of UNESCO which members are Armenia and Turkey.

The precedent for justification of requirements of compensation of material losses of the Armenian Genocide can be considered the Luxembourg agreement of September 10, 1952 by the “Conference on Jewish material claims against Germany” according to which Germany began payment of material losses to Jews. The international law, certainly, defines also compensation of material damage: the restitution assumes return of material values or restoration of the previous legal status, the restaurant defines that all those rights which allocated representatives of group – the victim before crime execution have to be restored.

For overcoming psychological and moral consequences of the Armenian Genocide in international law the satisfaction which can be expressed in recognition of perfect offense, expression of regret, official apology or in any other form is applicable. In this sense first of all the termination by Turkey of the policy of denial of the fact of the Armenian Genocide which is officially pursued by it could be considered as important manifestation of a satisfaction.

On the basis of "The package of requirements" it is necessary to prepare also "The action program on overcoming consequences of the Armenian Genocide" in which methods and mechanisms of activity of Armenia and Diaspora in the legal and political directions on overcoming consequences of Genocide have to be presented.

As the subject of international law, being guided by the Charter of the UN and by provisions of the Convention of the UN on Genocide, Armenia can address to the international degrees of jurisdiction and on settlement of dispute between Armenia and Turkey, and on specific questions, for example, on interpretation and application of provisions of the convention, or through United Nations Organs to appeal to the International Court of Justice to draw the advisory opinion about competency of the arbitral decision of the U.S. President Woodrow Wilson on the Armenian-Turkish border.

It is no secret that on international law and, especially on respect for its norms, certain influences have the geopolitical processes proceeding in the world and in concrete regions in particular, an alignment of forces and their interests in the international relations, etc. For this reason international legal processes of overcoming consequences of the Armenian Genocide have to be carefully prepared from the political party. Political steps on overcoming consequences of the Armenian Genocide have to both to proceed, and to be conducted in parallel with international legal steps in this direction.

Overcoming consequences of the Armenian Genocide is not only a question of restoration of the rights of all Armenian people and a national security of the Republic of Armenia; it is also a tribute to the memory of the innocent victims of this crime.